

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՄԲ ՈՒՔՐԱՆԻՈՅ ԵՒ ՌՈՒՄԻՈՅ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ ՅԱԶՈՐԳ ՇԱՔԱԾ ԱՊՈՒ ՏԱՊԻ ՄԷՁ



Միացեալ Նահանգներու աջակցութեամբ Ուքրաինոյ եւ Ռուսիոյ մասնակցութեամբ եռակողմ բանակցութիւնները տեղի պիտի ունենան յաջորդ շաբաթ Ապու Տապիի մէջ, կիրակի օր յայտարարած է Ուքրանիոյ Նախագահ Վոլոտիմիր Չելենսքի։

Բանակցութիւններու առաջին փուլը տեղի ունեցած է յունուարի վերջաւորութեան։

Չելենսքի ըսած է, որ նոր բանակցութիւնները տեղի պիտի ունենան 4 եւ 5 փետրուարին, եւ որ Ուքրանիան պատրաստ է «առարկայական քննարկման»։

ՌՈՒՄԻԱՅԷՆ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԱՀԱՏԻԿ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ Է



Ռուսիայէն Ազրպեյճանի տարածքով հացահատիկով բեռնուած վազոններ ուղարկուած են Յայաստան, կը յայտնեն ազրպեյճանական լրատուամիջոցները։

Կը Նշուի, որ տարանցումով Ռուսիայէն Յայաստան ուղարկուած է 25 վազոն հացահատիկ՝ 1.746 թոն ընդհանուր կշիռով։

Այս պահու ղրութեամբ Ռուսիայէն Ազրպեյճանով տարանցումով արդէն Յայաստան ուղարկուած է հացահատիկով բեռնուած 285 վազոն՝ մօտ 19 հազար 900 թոն հացահատիկ։

2025-ի վերջին Յայաստան Ազրպեյճանի տարածքով սկսաւ հացահատիկ ու վառելիք ներմուծել։

ԻՐԱՆ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՆԵՐԸ «ԱՀԱՔԵԿԶԱԿԱՆ ԽՈՒՄՔԵՐ» ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իրան «ահաբեկչական խմբաւորումներ» կը նկատէ Եւրոպական Միութեան երկիրներու բանակները, որոնք յեղափոխական պահակագունդը ներառած են դաշինքի ահաբեկչական կազմակերպութիւններու ցուցակին մէջ։ Այդ մասին կիրակի օր յայտարարած է խորհրդարանի Նախագահ Մոհամետ Պաքեր Զալիպաֆը։

Ան նշած է, որ եւրոպացիները հերթական անգամ որոշում տուած են, որ կը հակասէ իրենց ժողովուրդի շահերուն՝ «կուրօրէն հնազանդելով ամերիկացիներուն»։

«Յեղափոխական պահակագունդը ահաբեկչական կազմակերպութիւն ճանչալու դէմ հակաքայլերու մասին օրէնքի 7-րդ յօդուածին համաձայն՝ եւրոպական երկիրներու բանակները կը նկատուին ահաբեկչական խմբաւորումներ», ըսած է Զալիպաֆ՝ անլցնելով, որ Ազգային անվտանգութեան խորհրդարանական յանձնախումբը պիտի քննարկէ Եւրոպական Միութեան երկիրներու ռազմական կցորդներու արտաքսման հարցը։



ԹՐԱՄՓ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է, ՈՐ ԻՐԱՆ ԿԸ ԲԱՆԱԿՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԵՏ

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ յայտարարած է, որ Իրան «լրջօրէն կը խօսի» Միացեալ Նահանգներու հետ՝ ռազմական գործողութիւններու վերսկսման սպառնալիքներու եւ Մերձաւոր Արեւելքի լարուած շրջանին մէջ ամերիկեան նաւատորմի ներկայութեան խորապատկերին վրայ։



«Մենք կը տեսնենք, թէ արդեօք կրնա՞նք բան մը ընել։ Հակառակ պարագային տեսնենք, թէ ի՞նչ պիտի ըլլայ», ըսած է Թրամփ «Ֆոքս Նիուզ»-ին։

Պարզ չէ, թէ ի՞նչ հանգամանքներու մէջ կրնան նման բանակցութիւններ տեղի ունենալ։

Թրամփ նաեւ ընդգծած է, որ Միացեալ Նահանգներու վարչակազմը շըրջանին մէջ իր դաշնակիցներուն չէ տեղեկացուցած հաւանական ռազմական հարուածներու մասին՝ վկայակոչելով անվտանգութեան նկատառումները։

Թրամփը հրապարակաւ կարծօր դիրքորոշում որդեգրած է Իրանի դեկավարներուն նկատմամբ՝ Թեհրանի եւ երկրի այլ քաղաքներուն մէջ հակա-կառավարական ցոյցերու ճնշման լոյսին տակ։

Միացեալ Նահանգներու մէջ տեղակայուած ՀՐԱՆԱ իրաւապաշտպան կազմակերպութիւնը անլի կանուխ յայտնած է, որ հաստատուած զոհերու թիւը, ներառեալ՝ անվտանգութեան ուժերու աշխատակիցները, ներկայիս կը կազմեն 6 հազար 563 մարդ, իսկ անոնց թիւը, որոնց մահը տակաւին չէ հաստատուած, եւ հետաքննութիւնը կը շարունակուի, կը կազմէ 17 հազար 91։ Ձերբակալուած է անլի քան 49 հազար մարդ։

Իրանի արտաքին գործոց Նախարար Ապաաս Արաղի ուրբաթ օր Նշած էր, որ Թեհրան բաց է բանակցութիւններու համար, եթէ Ուաշինկթըն իրաժարի սպառնալիքներէն եւ հարկադրանքէն։

ԻՍՐԱՅԷԼ ՀԱՐՈՒԱԾԱԾ Է ԿԱԶԱՆ



Իսրայել շաբաթ օր հասցուցած է ամենէն ուժեղ հարուածներէն մէկը Կազային հոկտեմբերեան զինադադրէն ի վեր։ Կայ անլի քան 30 զոհ, յայտնած են պաղեստինեան առողջապահական համակարգի ներկայացուցիչները։

Իսրայելցի զինուորականները յայտարարած են, որ ատիկա պատասխան է մէկ օր առաջ տեղի ունեցած զինադադարի խախտման։ Իսրայելի բանակին համաձայն՝ յարձակման թիրախը եղած են հրամանատարները, զենքի պահեստները եւ արտադրական տարածքները, որոնք կը պատկանին պաղեստինեան «Համաս» խմբաւորումին եւ անոր դաշնակից Իսլամական ժիհադին։

Արեմուտքի կողմէ ահաբեկչական ճանչցուած «Համաս»-ը կը պնդէ, որ

Իսրայել խախտած է զինադադարը։

Կիրակի օրը Իսրայել պետք է վերաբանար Կազայի հատուածի եւ Եգիպտոսի միջեւ Ռաֆահ սահմանային անցակէտը՝ համաձայն Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփի՝ պատերազմը դադրեցնելու ծրագիրին։ Սակայն, յայտնի չէ, թէ արդեօք ատիկա պիտի իրականանայ։

Այս ամիսներուն զինադադարի դրութիւնը բազմիցս խախտուած է։ Կազայի վերաբերեալ Թրամփի ծրագիրի յաջորդ փուլը կը Նախատեսէ բարդ հարցերու լուծում, ինչպիսիք են «Համաս»-ի զինաթափումը, որ խըմբաւորումը երկար ժամանակէ ի վեր կը մերժէր, Իսրայելի հետագայ հեռացումը Կազայէն եւ միջազգային խաղաղապահ ուժերու տեղակայումը։

ՃԻՏԱՆ. «ԵԹԷ ԼՈՆՏՈՆԸ, ՓԱՐԻԶԸ, ՊԵՐԼԻՆԸ ՈՒ ԱՆԳԱՐԱՆ ՄԻԱՍԻՆ ԳՈՐԾԵՆ, ՍՏԻՊՈՒԱԾ ԶԵՆՔ ԸԼԼԱՐ ԴԷՊԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ, ԶԻՆԱՍՏԱՆ ԿԱՄ ՌՈՒՄԻԱ ԹԵՔՈՒԵԼՈՒ»

«Եթէ Լոնտոնը, Փարիզը, Պերլինն ու Անգարան միասին գործեն, ստիպւած չենք ըլլար դէպի Միացեալ Նահանգներ, Չինաստան կամ Ռուսիա թեցուելու։ Մենք կրնանք ստեղծել մեր սեփական ուժի կեդրոնը», այս մասին «Ժազիրա» արբանեակային պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց Նախարար Հաքան Ֆիտան։

Ան զգուշացուցած է, որ Եւրոպայի համար ամերիկեան «անվտանգութեան հովանոց»-ը չի կրնար մնայուն նկատուիլ։

«Ուաշինկթընէն կախեալութիւնը ռիսքեր կը պարունակէ, եւ անկախ քաղաքական ու անվտանգութեան միջու-



կի ձեւաւորումը Եւրոպային ու Թուրքիոյ պիտի արտօնէ համաշխարհային բեւեռացման տրամաբանութենէն դուրս գործել», ընդգծած է թրքական դիւանագիտութեան պետը։

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ԵՒ ՄԷԿ ՔԱՀԱՆԱՅԻ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԱՌԱԶԱԴՐՈՒԱԾ Է



Շաբաթ օր Զննչական կոմիտէ իրաւորուած են Յովնան եպս. Յակոբեան, Մակար եպս. Յակոբեան եւ տէր Մովսէս քահանայ։

Անլի կանուխ փաստաբան Արա Չոհրաբեան յայտնած էր, որ «շաբաթ առաւօտէն ոստիկանութեան միջոցով ծանուցագիրներ կը յանձնուին Գերագոյն հոգեւոր խորհուրդի եպիսկոպոս անդամներուն՝ իբրեւ մեղադրեալ Զննչական կոմիտէ ներկայանալու համար»։

Փաստաբանին համաձայն, եպիսկոպոսները կը մեղադրուին դատական վճիռի կատարման խոչընդոտելու արարքի յանցանքով։

Զննչական կոմիտէն առաջմ չի մեկնաբաներ այս տեղեկատուութիւնը։

«Ակնյայտ է, որ սա հերթական միջամտութիւն է եկեղեցւոյ ներքին գործերուն, եւ ասոր հիմնական նպատակն է խոչընդոտել եպիսկոպոսաց ժողովի կայացման», գրած է փաստաբան Արա Չոհրաբեան։

Անլի ուշ, փաստաբան Արմինէ Ֆանեան Զննչական կոմիտէին մօտ լրագրողներու հետ զրոյցին ըսաւ. «Կը կարծենք՝ նպատակը եպիսկոպոսաց ժողովը տապալելն է, որովհետեւ հոգեւոր խորհուրդի անդամները մէկ անգամէն ծանուցուած են մեղադրեալի դատավարական կարգավիճակով։ Սա ալ եզակի բան է։ Կը Նշանակէ, որ արդէն քրեական հետապնդում յարուցելու որոշում կայ, պիտի ընտրուին խափանման միջոցներ», լրագրողներուն հետ զրոյցի ընթացքին ըսաւ փաստաբան Արմինէ Ֆանեան։

Հաղորդուեցաւ, որ Գերագոյն հոգեւոր խորհուրդի եպիսկոպոս անդամներուն արգիլուած է երկրէն դուրս գալ։

ՄԱՍԼԵՆԻՔՈՎ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՄԵՐՉԵՑՈՒՄԸ ՊԻՏԻ ԱԶԴԷ ՌՈՒՄԻՈՅ ՀԵՏ ԱՆՈՐ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ»

Հայաստանի Եւրոպական Միութեան հետ հարկադիր մերձեցումը բացասական հետեւանքներ պիտի ունենայ թէ՛ Ռուսիոյ հետ անոր դաշնակցային յարաբերութիւններուն վրայ, թէ՛ ալ յետխորհրդային տարածքին մէջ համարկումի հոլովոյթներու զարգացման համար։ Այս մասին ԹԱՍՍ լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց Նախարարութեան Եւրոպական խնդիրներու վարչութեան տնօրէն Վլատիսլաւ Մասլեննիքով։

Մեկնաբանելով Եւրոպական Միութեան միանալու Երեւանի մտադրութիւնը՝ ան նշած է, որ հաշուի առնելով Եւրոպական Միութեան յարձակողական ռազմաքաղաքական դաշինքի արագ վերափոխումը եւ Ռուսիոյ հետ ճակատումի ուղղուած անոր ռազմավարական ուղղութեան խաթարութիւնները, թէ՛ ալ յետխորհրդային տարածքին մէջ համարկումի հոլովոյթներու զարգացման համար», ընդգծած է Մասլեննիքով։

«Մենք յոյս ունինք, որ Յայաստանը՝ իբրեւ Եւրասիական տնտեսական միութեան անդամ պետութիւն, կը գիտակցի Պրիքսելի հետ հարկադիր մերձեցման հաւանական բացասական հետեւանքներուն՝ թէ՛ մեր դաշնակցային յարաբերութիւններու, թէ՛ ալ յետխորհրդային տարածքին մէջ համարկումի հոլովոյթներու զարգացման համար», ընդգծած է Մասլեննիքով։



ՄԵԹՐԻ «ԼԻԲԱՆԱՆԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱՐԱԾ ՍՈՒՐԻՈՅ ՀԵՏ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ԿՆՔԷ՝ 300 ՍՈՒՐԻԱՅԻ ԿԱԼԱՆԱԽՈՐՈՒՄԾՆԵՐ ՅԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Փոխվարչապետ Թարեց Մըթրի ԱՖՓ լրատու գործակալության հետ հարցազրույցի ընթացքին յայտնեց, որ Լիբանանն ու Սուրիան յառաջիկայ շաբաթ համաձայնության մը պիտի կնքեն՝ լիբանանեան բանտերուն մէջ գտնուող շուրջ 300 սուրիացի կալանաւորուածներ յանձնելու հարցով:

Մըթրի ըսաւ, որ կառավարութեան ուրբաթ օր հաւանութիւն տուած համաձայնութիւնը պիտի ներառէ շուրջ 300 սուրիացի դատապարտեալներու, որոնք լիբանանեան բանտերուն մէջ 10 եւ ավելի տարիներ մնացած են:

Փոխվարչապետը նշեց, որ համաձայնութիւնը յառաջիկայ շաբաթ պիտի ստորագրուի Պեյրութի մէջ եւ անմիջապէս ուժի մէջ պիտի մտնէ: Հաւանական կը նկատուի, որ ստորագրութեան արարողութեան ներկայ գտնուի Սուրիոյ արդարադատութեան կամ արտաքին գործոց նախարարը:

«Սուրիացի դատապարտեալները ազատ պիտի չարձակուին, այլ իրենց երկրին պիտի յանձնուին՝ այդտեղ կրելու համար իրենց պատիժին մնացած բաժինը», շեշտեց Մըթրի:

Փոխվարչապետը նշեց, որ համաձայնութեան կընքումը «երկու երկիրներուն միջեւ առկա մնացած խնդիրներու լուծման առումով մեծ քայլ է եւ իսկական առիթ մը» Սուրիոյ հետ կառուցելու նոր յարաբերութիւններ, որոնք հիմնուած են փոխադարձ վստահութեան ու յարգանքի, ինչպէս նաեւ երկու պետութիւններու գերագոյն շահերուն համահունչը:

ՅԱՅՄԱԼ ՔԱՐԱՄԷ: «ԱՄՔՈՂՋ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԶԷՆՔԻ ՀԱՐՅԸ ԿԱՐԵԼԻ Է ԼՈՒԾԵԼ ՓՈԽՀԱՄԿԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԼՈՒՐՋ ԵՐԿԻՍՈՍՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ»

Երեսփոխան Ֆայսալ Քարամէ «Ժատիտ» պատկերասփիռի կայանին յայտնեց. «Համաձայն եմ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի հետ, թէ ազգային միասնականութիւնը մեզ կը պաշտպանէ, սակայն կ'աւելցնեն, թէ պետութիւնը մեզ կը պաշտպանէ, եւ Իսրայէլը արդէն պատրուակներու կարիք չունի»:

«Լիբանան գոյութեան կանգնած է, ուստի անհրաժեշտ է ներքին փոխհասկացողութիւն գոյացնել, եւ այսօր այս իշխանութեան հետ առիթ մը ունինք», նշեց Երեսփոխանը:

«Փոխհասկացողութեան եւ լուրջ երկխոսութեան ճամբով կարելի է գէնքի հարցը լուծել ամբողջ Լիբանանի եւ ոչ միայն հարաւային Լիբանանի մէջ կամ Լիթանի գետէն հիւսիս», աւելցոց Քարամէ:

Ֆայսալ Քարամէ նշեց, որ կը գորակցի հանրապետութեան նախագահ ժողով Աունի դիրքորոշման, թէ պետք է յարգել երեսփոխանական ընտրութիւններուն վերաբերեալ սահմանադրական ժամկետները:



14 ՓԵՏՐՈՒԱՐԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԵԾԱԹԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՈՒՂԵԼՈՎ՝

ԱՀՄԵՏ ՀԱՐԻՐԻ «ՄԱՍՏ ՀԱՐԻՐԻԻ ԱՐՏԱՍԱՆԵԼԻՔ ԽՕՍՔԸ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ՊԻՏԻ ՆԵՐԱՌԷ»



Մուսթաքպալ հոսանքի ընդհանուր քարտուղար Ահմետ Հարիրի՝ առ ի պատրաստութիւն նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի ահաբեկման 21-ամեակին, Պեքայի մէջ շրջապտոյտի առաջին օրուան ընթացքին հոսանքի կեդրոնական Պեքայի մասնաճիւղին հետ հանդիպումներու շարք մը ունեցաւ:

Հարիրի ներկայներուն փոխանցեց նախկին վարչապետ Սաատ Հարիրիի ողջոյնները եւ զնահատանքը կեդրոնական Պեքայի եւ ամբողջ Լիբանանի մէջ գտնուող Մուսթաքպալ հոսանքի բոլոր կողմնակիցներուն եւ անձնակազմին՝ «նահատակ վարչապետ Ռաֆիք Հարիրիի սկզբունքներուն նուիրածութեան համար» բոլոր մարտաւիրաւերներուն դիմաց, յատկապէս քաղաքական աշխատանքի առկախման կասեցման ժամանակահատուածին մէջ, եւ ամէն տարի անոր դամբարանին առջեւ զանգուածային ոգեկոչումը կազմակերպելու անոնց պատրաստակամութեան համար՝ համապատասխան անոր ազգային երթին, այն բանին, որ Հարիրիի շարժումը կը ներկայացնէ՝ ազգային՝ հաւասարակշռութեան մէջ կշիռ ունեցող եւ խոր արմատներ ունեցող ներկայութեան առումով, եւ ազգային նախագիծի, որուն

հիմքերն են «նախ Լիբանանը», «նախ պետութիւնը», «նախ արաբականութիւնը» եւ «նախ չափաւորականութիւնը» սկզբունքները:

Ան շեշտեց այժմու բոլոր զարգացումներուն ու փոփոխութիւններուն լոյսին տակ 14 փետրուարի ոգեկոչման զանգուածային մասնակցութեան անհրաժեշտութիւնը, որպէսզի անիկա ըլլայ ազգային օր մը, որ Սաատ Հարիրիի ղեկավարութեան մասին կը վկայէ «եւ կ'ընդգծէ նահատակ Ռաֆիք Հարիրիի ու Մուսթաքպալ հոսանքի երթի շարունակութիւնը, որպէսզի ազգային բոլոր հողովոյններուն մէջ մարդոց ծայնն ու խիղճը ըլլայ»:

«Համակիրներուն եւ շարքայիներուն մօտ հարցումները շատ են ու մեծ, եւ անոնց պատասխանը պիտի տրուի Սաատ Հարիրիի խօսքին մէջ, զոր բոլորը կը սպասեն: Անիկա պիտի ըլլայ վերջին խօսքը, հոսանքին կողմնացոյցը եւ յաջորդ փուլին անոր ճամբու քարտեզը, եւ պիտի ներառէ յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն վերաբերեալ դիրքորոշումը եւ անոնց նկատմամբ իր մօտեցումը՝ հիմնուելով անոնց կայացման թուականներուն վրայ, եւ «ամէն ինչ իր ժամանակին լաւ է», նշեց Ահմետ Հարիրի:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- ԱՐԲԻՐ մը «Անպա Էլքեթրոնիկա»-ին. «Վերջին օրերուն միջազգային աշխուժ աշխատանք կը տարուի, մասնաւորաբար Յնգեակ յանձնախումբի անդամ արաբական կողմերէն՝ Իրանի դէմ պատերազմի պարագային Լիբանանը որեւէ հետեւանքներ գերծ պահելու համար»:
- ԱՐԲԻՐ մը «Անպա Էլքեթրոնիկա»-ին. «Շրջանային այս ճակատումին Լիբանանի որեւէ մասնակցութիւն պատճառ պիտի դառնայ, որ պետութեան հարաւային Լիբանանի մէջ տեղակայման ու բանակի աջակցութեան խորհրդաժողովին համար թափուող միջազգային բոլոր ջանքերը կորսուին»:
- ԱՊԶՈՎԱԿԱՆ աղբիւր մը «Տիար» օրաթերթին. «Բանակի աջակցութեան Փարիզի խորհրդաժողովը պիտի յետաձգուի, եթէ առնչակիցները պահեն, թէ Լիբանանէն պահանջուածին գործարդութիւնը երկար պիտի տենէ, եւ «Մեքանիզմ»-ի յանձնախումբը եւս նոյն ճակատագիրին պիտի մատնուի, եթէ 25 փետրուարին հասնինք, եւ կացութիւնը տակաւին նոյնը մնայ»:

ՄՕՏ ՕՐԷՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԲՈՆԱԾԱՂԱՐԸ ՕՐԷՆՔՈՎ ՊԱՏԺԵԼԻ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Լիբանանի մէջ բըռնածաղրը մօտ օրէն պիտի դառնայ պատժելի երեւոյթ, այն բանէն ետք, երբ լիբանանեան կառավարութիւնը իր 30 յունուարի նիստին համաձայնութիւն տուաւ բռնածաղրի քրեականացման օրինագիծին:

Նշենք, որ բռնածաղրի քրեականացման օրինագիծը ներկայացուած էր հայկական երեսփոխանական պլոքի անդամ Երեսփոխան Յակոբ Թերզեանի կողմէ: Օրինագիծը ներկայիս յղուած է խորհրդարանին՝ առ ի վաւերացում:



ՄԱՍԼԵՆԻՔՈՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ...»

Շարունակուած Ա. Էջն

«Պրիքսելը որոշ պահու կը սկսի որեւէ թեկնածու երկրէ պահանջել լիակատար համերաշխութիւն իր արտաքին քաղաքականութեան հետ, որ ներկայիս բացայայտ հակառուսական է: Ես նաեւ յոյս ունիմ, որ Երեւանը կը հասկնայ, որ նոյնիսկ Պրիքսելի բոլոր պահանջներուն բաւարարումը չ'երաշխատրէր Եւրոպական Միութեան անդամակցութիւնը», ըսած է դիւանագետը՝ մեկնաբանելով Հայաստանի Եւրոպական Միութեան հետ համարկման ծրագիրները:

Իբրեւ օրինակ՝ Մասլենիքով նշած է կացութիւնը Արեւմտեան Պալեստինայի, որոնք տասնամեակներէ ի վեր կանգնած են Եւրոպական Միութեան միանալու հերթին մէջ (Ալպանիա՝ 2000 թուականէն, Հիւսիսային Մակեդոնիա՝ 2004 թուականէն, Մոնթենեգրո՝ 2008 թուականէն, Սերպիա՝ 2009 թուականէն)՝ կատարելով Եւրոպացի դիւանակալներու խիստ պահանջները, որոնք յաճախ բնաւ ժողովրդական չեն բնակչութեան մօտ, սակայն չեն մօտենար իրենց եւրոյի երագանքի իրականացման:

«Մենք պետք է նաեւ յիշենք, որ իրականութեան մէջ Եւրոպական Միութեան անդամակցութիւնը, յատկապէս հաշուի առնելով անոր ներկայ վիճակը, ոչ մէկ ձեռով կ'երաշխատրէ թեկնածու երկիրներու բարգաւաճումը: Պալեստինայի երկիրներուն մէջ, որոնք վերջերս նշած են Եւրոպական Միութեան անդամակցութեան 20-ամեակը, տնտեսական ցուցանիշները եւ ժողովրդագրական կացութիւնը, մեղմ խօսքով, աննշան են», ընդգծած է ան:

Շար.ը՝ Էջ 8

ՄԱՐԱՇԻ ԱՂԵՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

Սիրելի՛ հայրենակից,

Լիբանանի Մարաշի հայրենակցական միութիւնը պիտի յիշատակէ Մարաշի աղէտին 106-րդ տարելիցը:

Նոր Մարաշի հայ երեք յարանուանութեանց եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենան Ս. պատարագ, պաշտամունք եւ հոգեհանգստեան պաշտօններ, կիրակի, 8 փետրուար 2026-ին, մարաշցի հին եւ նոր ննջեցեալ հայրենակիցներու հոգիներուն համար:

Կը հրաւիրենք ձեզ բոլորդ՝ ներկայ գտնուելու վերոյիշեալ եկեղեցական արարողութիւններուն, յարգելու համար խնկելի յիշատակը մեր ննջեցեալներուն:

Սրբոց Զառասկից Մանկանց եկեղեցի
Յաւարտ Ս. պատարագի
Ս. Փրկիչ եկեղեցի
Յայ աւետարանական եկեղեցի

Ժամը 10:00-ին
Ժամը 10:30-ին

Յաւարտ եկեղեցական արարողութեանց, յարգելու համար մեր նահատակներուն յիշատակը, բոլոր հայրենակիցները հրաւիրուած են միութեան սրահը՝ «Գերմանիկ» կեդրոն, ուր պիտի մատուցուի հոգեսուրճ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿԱԿԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀՅՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԻՆ
ՎԱՐՁՔԵՐՈՒ ՕՐԷՆՔԻ ՀԱՐՅ

ԿՈՂՄԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ
ԵՒ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՉՐՈՅՑ

ԵՐԵՃԱՔԹԻ, 3 ՓԵՏՐՈՒԱՐ 2026-ԻՆ,
ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԱՇ 7:30-ԻՆ,
«ԱՅՂԱԿ»-Ի «ՓԻԷՆԻԿ» ՍՐԱՀԻՆ ՄԷՃ

@ARFLebanon

ՀՐԱԽԵՐ

BOXING

With
Coach SERGE TASLAKIAN
TUESDAY / THURSDAY
from 8:00 - 9:00 p.m

BOURJ HAMMOUD
ARIN CENTER 3rd FLOOR
01 255023
www.afhil.com

ԳՐԱԴՈՒՄՈՒ ՕՐ ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ

ՆՈՒՐՈՒՄՈՒՅ՝
ԻՐՄԱ ԳԱՊԱՔԵԱՆ-ՏԵՏԵԱՆԻ

18 ՄԱՐՏ 2026

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ (Ա. ՄԱՍ)

ԵՄ-ն ուժային կեդրոն, թե՛ բեռն

Վերջին տասնամյակներում միջազգային յարաբերությունների բազմաթիւ տեսաբաններ, դեռեւս՝ առանց վերջնական եզրայանգման, քննարկում էին այն հարցը, թե՛ արդեօք Եւրոպական միութիւնը միջազգային յարաբերութիւններում հանդէս է գալիս որպէս ուժային կեդրոն, թե՛, այնուամենայնիւ, այն ուժային բեռն է, որը համագործակցութիւնից աւելի շատ ձգտում է սեփական շահերի պաշտպանութեանն ու միջազգային յարաբերութիւններում թելադրող դիրքի: 2022 թ. փետրուարի 24-ին սկսուած ռուս-ուքրանական պատերազմում ԵՄ դեռեւս պահպանուող միասնական քաղաքականութիւնը փաստում է, որ Եւրոպական միութիւնը միջազգային յարաբերութիւնների հանդարտ փուլում կարող է հանդէս գալ որպէս ուժային կեդրոն, սակայն անկայուն իրավիճակներում այն ի զօրու է վերածուելու քաղաքական բեռնի՝ սեփական առաջնահերթութիւնների յստակ գիտակցմամբ ու սպասարկմամբ: Երկու պարագայում էլ միանշանակ է, որ, ի դէմս Եւրոպական միութեան, մենք գործ ունենք քաղաքական յարաբերութիւնների համաշխարհային դերակատարի հետ, որի բարդ քաղաքական վարքը ենթակայ չէ միանշանակ սահմանման:

Վերջին տարիների ընթացքում միջազգային յարաբերութիւններում Եւրոպական միութեան քաղաքական կշռին նետուած խոշորագոյն մարտահրաւերին՝ ի դէմս ռուս-ուքրանական պատերազմի, արդէն 2025 թ. տարեսկզբից աւելացաւ Ամերիկայի Միացեալ Նահանգների նոր վարչակազմի հետ շարունակաբար լարուող յարաբերութիւնները: ՕՌԱՄ-ի շրջանակներում ամերիկեան գերակայութեան անընդհատական շեշտումը, Եւրոպական գործընկերների կատարմամբ քաղաքական եւ տնտեսական լծակները որպէս քաղաքական ազդեցութեան գործիք օգտագործելու ամերիկեան նոր վարչակարգի փորձերը, տարածքային պահանջները Դանիայի Թագաւորութիւնից, յաճախ Եւրոպական ներքին քաղաքականութեանը միջամտելու փորձերը Եւրոպական միութեան համար նոր փորձութիւն են՝ արդէն ռազմավարական դաշնակցի եւ խոշորագոյն գործընկերոջ հետ յարաբերութիւններում:

Սրանից զատ, Եւրոպական միութիւնը բախուած է նաեւ ներքին ինդիւիդների՝ կապուած անօրինական գաղթի, սահմանների կառավարման, եւ որ թերեւս ամենաբարդը կարող լինել՝ ծայրայեղ աջ քաղաքական հոսանքների անխիղճաց աշխուժացման, յատկապէս այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Գերմանիան, Ֆրանսան, Դոլանտան, Շուեդը եւ այլն:

«Եւրոպական ծրագրիս» նետուած այս մարտահրաւերների յաղթահարումից եւ կախուած, կը դառնա՝ արդեօք Եւրոպական միութիւնը ուժային բեռն, թե՛ կը շարունակի գոյութիւն ունենալ որպէս ուժային կեդրոն: Երկու դէպքում էլ ԵՄ-ն կը շարունակի միջազգային յարաբերութիւնների առանցքային դերակատար լինել:

Շատ մասնագետներ միջազգային յարաբերութիւնների ներկայ անկայունութեան առաջին ազդակները կապում են Միւնիխի անվտանգութեան համաժողովում ՌԴ Նախագահ Վլատիմիր Փութինի 2007 թ. յայտնի ելոյթի հետ, երբ Ռուսաստանը հանդէս եկաւ ԱՄՆ առաջնորդութեամբ միաբեռն աշխարհի քննադատութեամբ եւ Նախնայնից Արեւմուտքի հետ համակարգային դիմակայութեան նոր փուլի սկիզբը, որն իր արտացոլումը գտաւ 2008 թ. ռուս-վրացական, պատերազմով, 2014 թ. Դրիմի գրամմամբ, ապա՝ 2022 թ. ռուս-ուքրանական ընթացող պատերազմով:

Աշխարհակարգի կանոնների խարխուլումը կանխատեսելով երթերես, որ 2009 Եւրոպական միութեան Լիզպոնեան համաձայնագրով փորձ արուեց՝ ի դէմս Արտաքին գործողութիւնների Եւրոպական ծառայութեան (EEAS), ամրապնդել եւ աւելի համակարգւած դարձնել անդամ պետութիւնների արտաքին քաղաքականութիւնների համադրումն ու իրականացումը՝ առանց դրանք ամբողջութեամբ միաւորելու: Այս ընդհանուր պարունակում Լիզպոնեան համաձայնագիրը կարեւոր էր, որովհետեւ այն ԵՄ-ին հնարաւորութիւն տուեց հանդէս գալ որպէս աւելի միասնական եւ կանխատեսելի արտաքին դերակատար՝ ի պատասխան «Պաղ պատերազմի» բնորոշ ուժային նոր մրցակցութեան եւ միաբեռն կարգի ծաքերի, որոնք յատկապէս տեսանելի դարձան Միւնիխի 2007 թ. համաժողովից յետոյ:

Եւրոպական միութեան արտաքին յարաբերութիւնների համակարգը ընդգրկում է ամբողջ աշխարհը՝ իւրաքանչիւր երկրի եւ տարածաշրջանի համար առանձնաբար ճշգրտած քաղաքական առաջնահերթութիւններով, յարաբերութիւնների մակարդակով եւ ռազմավարական տեսականով: Սոյն յօդուածի շրջանակում մեզ առաւելաբար հետաքրքիր է Եւրոպական միութեան տարածաշրջանային քաղաքականութիւնը Զարաւային Կովկասում եւ Սեւծովեան տարածաշրջանում:

Ինչ վերաբերում է Զարաւային Կովկասում Եւրոպական միութեան տարածաշրջանային հետաքրքրութիւններին, ապա դրանք արտացոլուած են «Արեւելեան հարեանութեան քաղաքականութեան» եւ «Արեւելեան գործընկերութեան» ծրագրերում, ինչպէս նաեւ՝ երկրներից իւրաքանչիւրի հետ ուրոյն համաձայնագրերի առկայութեամբ, որոնք վերաբերում են յարաբերութիւնների տարբեր մակարդակներ:

Եւրոպական հարեանութեան քաղաքականութիւնը մեկնարկել է 2003 թուականից: Այն նպատակ ուներ կառավարելու Եւրոպական միութեան յարաբերութիւնները ԵՄ 16 հարեան պետութիւնների հետ՝ հարաւային (10) եւ արեւելեան (6) ուղղութիւններով: Ըստ պաշտօնական փաստաթղթերի, Եւրոպական հարեանութեան քաղաքականութեան նպատակն է՝ «Խուսափել ընդլայնուած Եւրոպայի եւ հարեանների միջեւ բաժանարար գծերի առաջացումից, փոխարենն՝ ամրապնդել բոլորի բարգաւաճումը, կայունութիւնը եւ անվտանգութիւնը»:

ՀՀ-ԵՄ յարաբերութիւնների առանցքային հարթակներից մէկը՝ Արեւելեան գործընկերութիւնը, մեկնարկեց 2009 թ. մայիսին Փրակայի գագաթնաժողովով՝ նպատակ ունենալով ուժեղացնելու եւ խորացնելու ԵՄ յարաբերութիւնները 6 հարեան պետութիւնների՝ Զայաստանի, Ազրպէյճանի, Պիւլոռուսիայի, Վրաստանի, Մոլտովայի եւ Ուքրանիայի հետ:

Արեւելեան գործընկերութեան քաղաքականութեան առաջնահերթութիւնների կիրառական դաշտերը չորսն են.

- Աւելի ուժեղ տնտեսութիւն (տնտեսական զարգացում եւ շուկայական հնարաւորութիւններ),
- Աւելի ուժեղ կառավարում (պետական) կառոյցների ամրապնդում եւ լաւ կառավարում),
- Աւելի ուժեղ փոխկապակցուածութիւն (փոխկապակցուածութիւն, ուժանիւթի խնայողութիւն եւ կլիմայական փոփոխութիւններ),
- Աւելի ուժող հասարակութիւն (շարժունակութիւն եւ միջանձնային շփումներ):

Ներկայումս ԵՄ-ի եւ ԱԳ (Արեւելեան գործընկերութիւն) պետութիւնների յարաբերութիւններում առկայ է բովանդակային երեք հարթութիւն՝ ընկերակցութեան (Վրաստան, Մոլտովա, Ուքրանիա), համագործակցութեան (Զայաստան) եւ գործակցութեան (Պիւլոռուսիա՝ կասեցուած, Ազրպէյճան): Աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հետագայ զարգացումները ցոյց տուեցին, որ ԵՄ Արեւելեան գործընկերութեան քաղաքականութիւնը իր ընդհանրութեան մէջ ծախողում է: Մասնաւորապէս, Ուքրանիայում պատերազմ է, Մոլտովայում Եւրոպական ազդեցութիւնը պահպան-



ւեց ընտրութիւններին ուղղակի միջամտութեան արդիւնքում միայն: 2022 թ. յուլիսի 18-ին Ազրպէյճանի եւ Եւրոպական միութեան միջեւ ստորագրուեց ուժանիւթի ոլորտում ռազմավարական համագործակցութեան փոխըմբռնման յուշագիր, ինչը Նախատեսում է գրեթէ կրկնապատկել ազրպէյճանական կազմի տարանցումը Եւրոպա: Սակայն վստահելի աղբիւրները պնդում են, որ Զարաւային կազմային միջանցով ԵՄ հասնող ազրպէյճանական կազմի իրատեսական ծաւալը կարող է լինել շուրջ 10 միլիառ խորանարդ մետր, ինչը Եւրոպական տարեկան սպառման 3 տոկոսն է, իսկ ներմուծման՝ 2 տոկոսը: Այս պայմաններում սա աւելի շատ քաղաքական քայլ է՝ Ազրպէյճանում ԵՄ ազդեցութեան որոշակի պահպանման, քան թե՛ ուժանիւթային բազմազանութիւն ապահովող գործողութիւն: Աւելին. ԵՄ-Ազրպէյճան յարաբերութիւնների տեսանկիւնից ԱԳ երկրների շարքում Ազրպէյճանը թերեւս ամենից կրաւորականն է, չնաչուած Պիւլոռուսիան, որի հետ երկխօսութիւնը սառեցուած է:

Այս պայմաններում Զայաստանը Պիւլոռուսիայի համար այսօր կարող է դիտուել տարածաշրջանի ամենակարեւոր գործընկերներից մէկը: Ստացում է, որ Արեւելեան գործընկերութեան տարածաշրջանում Եւրոպական ուղղութեան վրայ յարաբերութիւնների զարգացման եւ տեղում Եւրոպական ներկայութեան միակ երկիրը Զայաստանն է:

ՀՀ-ԵՄ յարաբերութիւնների համար հիմնադրութային նշանակութիւն ունի 2017 թ. Նոյեմբերին ստորագրուած եւ 2021 թ. մարտի ուժի մէջ մտած «Համապարփակ եւ ընդլայնուած համագործակցութեան համաձայնագիրը»: Այն, ըստ Եւրոպեան, կրկնում էր ՀՀ-ԵՄ ընկերակցութեան համաձայնագրի Նախագծի քաղաքական մասը, իսկ տնտեսական մասը համաձայնեցուած էր Զայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցութեան պահանջներին: Այն մինչեւ օրս համարում է չափազանց յաւակնուտ եւ եզակի համաձայնագիր՝ Արեւելեան գործընկերութեան ամբողջ տարածքի համար. այն ներառում է հանրային կեանքի բոլոր ոլորտները եւ որակական ու բովանդակային բոլորովին նոր մակարդակի է բարձրացնում ՀՀ-ԵՄ յարաբերութիւնները:

Միջանկեալ նշենք, որ Նոյնիսկ 2025 թ. դեկտեմբերի 3-ին ստորագրուած ՀՀ-ԵՄ գործընկերութեան ռազմավարական օրակարգը յենում է ՀՀ-ԵՄ համափարփակ եւ ընդլայնուած համագործակցութեան համաձայնագրի վրայ: ՀՀ-ԵՄ երկկողմ յարաբերութիւնների առանձնայատկութիւններին կ'անդրադառնանք սոյն յօդուածի երկրորդ մասում:

Վերադառնանք ԵՄ տարածաշրջանային հետաքրքրութիւններին: Հասկանալու համար մեր տարածաշրջանում Եւրոպական միութեան քաղաքական նպատակները, կարեւոր է հայեացք նետել վերջին շրջանի երկու փաստաթղթերի՝ «ԵՄ Կլոպալ դարպասներ» (EU Global Gateway) Նախագծումութեանը եւ Եւրոպական Դաշնաւժողովի եւ ԵՄ բարձր ներկայացուցչի՝ «Մեծովեան տարածաշրջանի վերաբերել» ԵՄ-ի ռազմավարական մօտեցման մասին Եւրոպական խորհրդարանին եւ խորհրդին ուղղուած՝ 2025 թուականի մայիսի 28-ի համատեղ հաղորդագրութեանը:

ԵՄ Կլոպալ դարպասներ (EU Global Gateway) Նախագծումութիւնը Եւրոպական միութեան 300 միլիառ Եւրոյի ենթակառուցուածքային ներդրումային ռազմավարութիւնն է (2021-2027 թթ.), որի նպատակն է համաշխարհային մակարդակով ստեղծել անվտանգ կապեր թուային, ուժանիւթի, հաղորդակցութեան, առողջապահութեան, կրթութեան եւ գիտահետազոտական ոլորտներում: Նախագծումութիւնը միտուած է խթանելու կայուն զարգացումը, տնտեսական աճը եւ կրճատելու համաշխարհային ներդրումային բացերը՝ օգտագործելով Team Europe ձեւաչափի համատեղ ջանքերը, զօրաշարքի ենթարկելով մասնաւոր դրամագումար:

Global Gateway-ը, ըստ ամենայնի, նպատակ ունի միջազգային մակարդակում մրցակցութիւն հաղորդելու ամերիկեան եւ չինական տնտեսական գերակայութեանը: Համաձայն ծրագրի, որի խոշոր կեդրոնացումները՝ համապատասխանաբար 79.973 միլիառ եւ 77,161 միլիառ կեդրոնացուած են Սահարայի անապատից հարաւ տարածաշրջանի եւ Միջին Արեւելքի ու Զարաւային Աֆրիկայի վրայ, մեր տարածաշրջանին յատկացուած է 28,488 միլիառ՝ 6 երկրի համար: Այս ծրագրով ՀՀ Միւնիքի մարզում կառուցում է Միսիան-Զաջարան 70 քմ հատուածը, եւ Նախատեսուած է Միւնիքի մաքսային ու գումակային կեդրոնի կառուցումը, ինչպէս նաեւ՝ նման մի կեդրոն Երեւանում: Նոյն ծրագրի շրջանակում Վրաստանում եւ Ազրպէյճանում Նախատեսում է իրականացնել սեւծովեան ելեկտրական մալուխի անցկացման աշխատանքները: Դրա նպատակն է Զարաւային Կովկասի ելեկտրացանցը գերբարձր լարման մալուխով կապել Եւրոպական միութեան հետ եւ մեր տարածաշրջանից ելեկտրականութիւն մատակարարել դեպի ԵՄ: Ըստ ՀՀ իշխանութիւնների, Զայաստանը ցանկութիւն է յայտնել միանալու Նախագծին, որը մեր տարածաշրջանում անցնում է Ազրպէյճանով եւ Վրաստանով, սակայն, ըստ ամենայնի, չի յաջողուել՝ հաւանաբար Ազրպէյճանի պահանջով:

Միւս՝ «Մեծովեան տարածաշրջանի վերաբերել» ԵՄ-ի ռազմավարական մօտեցման մասին փաստաթուղթով ԵՄ-ն Սեւ ծովի տարածաշրջանը դիտում է որպէս կարեւորագոյն աշխարհառաջնավարական տարածք, որը միացնում է Եւրոպան՝ Զարաւային Կովկասին, Կեդրոնական Ասիային եւ արեւելեան Միջերկրականին: Ըստ այդմ, այս տարածքը ԵՄ-ի համար կարեւոր է հետեւեալ երեք ուղղութիւնների շրջանակում՝ անվտանգութիւն, տնտեսական զարգացում եւ առեւտրային ուղիներ, ուժանիւթային անվտանգութիւն եւ գիւղատնտեսական արտահանման երաշխիքներ:

Համաձայն փաստաթղթի, ԵՄ-ն նպատակ ունի աջակցել երկարաժամկետ անվտանգութեանը, կայուն աճին եւ զարգացմանը, աւելի համարկուած կապերին տարածաշրջանի երկրների հետ՝ բազմակողմանի գործընկերութիւններով:

ԳԵՌՐԳ ՂՈՒԿԱՍԵԱՆ
Քաղաքական գիտութիւնների թեկնածու, ՀՀԴ Բիւրոյի Հայ դատի կեդրոնական գրասենակի յատուկ ծրագրերի պատասխանատու

Շար.ը՝ էջ 6

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ «ՀԱՅՐԵՆԻԷ»-Ի ԿՐԻՆԼԱՆՏ՝ ԱՆՏԵՐՍՈՐՆԵԱՆ ՀԵՔԻԱԹ, ԹԷ՞ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ



Ժամանակին կար ու չկար (չէ՛, անպայման կար) հիւսիսային բեռնին մէջ լայնատարած կղզի մը՝ Կրիւլանտ, որ կը նկատուի աշխարհի մեծագոյնը... Այսպէս կարելի է սկսիլ դանկիացի հռչակաւոր հեքիաթագիր Հանս Զրիսթիան Աստերսընէն (1805-1875) ներշնչուած առասպել մը:

Երկար տարիներ մոռցուած սպիտակով ծածկըւած այս վիթխարի հողաշերտը, ահաւասիկ քանի մը ամիսէ ի վեր դարձած է կիզակէտ եւ էջերով մեյան կը հոսեցնէ առօրեայ լուրերուն մէջ:

Կարճ պատմական ակնարկ մը կատարելով՝ յայտնենք, որ ԸԵ 950-ականներուն, Իսլանտայի մօտակայքը՝ հիւսիսարեւմտեան շրջանին մէջ գտնուող մեծ կղզիի մը գոյութեան մասին կը նշուի պատահմամբ ուղղութեան շեղած նաւու մը անձնակազմին կողմ:

978 թուականին, հանրածանօթ հետազօտող մը՝ Ստեյպիորն Կալթի, կամաւորաբար կը նաւարկէ դէպի այդ հսկայ կղզին եւ կը փորձէ արեւելեան ափին վրայ բնակավայր մը հաստատել:

Կրիւլանտի առաջին մշտական բնակավայրը հիմնադրուեցաւ 985-ին՝ հետազօտող Էրիք Թորվալտսընի (կարմրամորթ ըլլալուն պատճառով ծանօթ «Կարմիր Էրիք» ծածկանունով) կողմէ, որ ԱՄՆ-ի Նախագահ Թրամփի աւելի քան դար մը առաջ նկատեց, թէ այդ կղզիին մէջ կարելի է ներդրում կատարել: Այդ նպատակով ալ, ներգրաւելու համար մօտակայ իսլանտացիներն ու սկանտինաւեան երկիրներու բնակիչները, կղզին անուանեց Կրիւլանտ՝ Կանաչ Երկիր, եւ զայն ներկայացուց որպէս տնտեսական եւ առեւտրական մեծ կարելիութիւններ խոստացող վայր:

Վստահաբար Թորվալտսընի համար այդ օրերուն յստակ չէր, թէ որքան հարուստ էր այդ վիթխարի կղզիին ընդերքը: Մինչդեռ այսօր, հակառակ անոր որ ձկնաբուծութիւնը կը մնայ Կրիւլանտի հիմնական առեւտուրը, սակայն յստակ է, թէ շրջաքա հարուստ է հանքային պաշարներով: Դեռ քանի մը տարի առաջ էր, որ կառավարութիւնը արդիւնք տր նաւթի եւ կազի հետախուզումը՝ բնապահպանական պատճառներով, մինչդեռ Թրամփի համար ախորժաբէր է այս ոլորտը: Եւ դեռ աւելին. այս կղզիին աշխարհագրական դիրքը՝ հիւսիսային բեռնի տարածաշրջանին ներս, հետզհետէ մեծ ռազմավարական նշանակութիւն կը ստանայ սառոյցներու անջատումէն եւ հալումէն ետք բացուող նոր ծովային ուղիներուն պատճառով: Ըստ Թրամփի մօտիկ հիւր կամակաւորներուն, այդ շրջանին մէջ կը գտնուի աշխարհի կազի պահեստին 30 տոկոսը եւ նաւթի՝ 13 տոկոսը, որոնք ցարկ չեն օգտագործուած:

Պատմութեան սլաքը բաւական մը յառաջացնելով, 1261-ին երբ ԱՄՆ տակաւին գոյութեան չունէր, Նորվեգիան ստանձնած էր Կրիւլանտի կառավարումը, ապա Դանիա-Նորվեգիա-Շուեդ երրորդութիւնն է, որ 1397-1523 տարիներուն դեկավարեց այդ երկիրը, մինչեւ որ 1814-ի Գերմանիոյ հիւսիսային Զիլ քաղաքի պայմանագրով Կրիւլանտը դարձաւ Դանիայի թագաւորութեան մաս կազմող ինքնավար տարածք մը, որ ունի իր լեզուն, որօքն եւ քաղաքացիական հաստատութիւնները: Անոր կողքին, դրամական, պաշտպանական եւ արտաքին գործերը մնացին Դանիոյ վերահսկողութեան տակ:

1953-ին գաղութային կարգավիճակ վերացուեցաւ, եւ 1979-ի «Ինքնավարութեան օրէնք»-ով կղզին ստացաւ լայն իրաւասութիւններ: 1985-ին ան դուրս եկաւ Եւրոպական տնտեսական համայնքէն: 2009-ին ստացաւ ինքնիշխան ինքնակառավարում, բայց կը շարունակէ տարեկան նիւթական օժանդակութիւն ստանալ Դանիայէն:

Միացեալ Նահանգները քանի մը անգամ փորձեցին գնել Կրիւլանտը: 1867-ին, ԱՄՆ-ի արտաքին գործոց Նախարար Ուիլիըմ Միւլլըր Ռուսիոյ հետ երկար բանակցութիւններ կատարելէ ետք, ձեռք բերաւ վկայքան: Ան Նոյն տարուան ընթացքին լոքօրէն քըննարկեց Կրիւլանտն ու Իսլանտան գնելու կարելիութիւնը, որ ապարդիւն դուրս եկաւ: 1946-ին Նախագահ Թրումբն առաջարկեց 100 միլիոն տոլար գումար մը, սակայն Դանիան մերժեց եւ միւելոյն ժամանակ ստորագրեց համաձայնագիր մը՝ թոյլ տալով, որ ամերիկեան ռազմակայան մը հաստատուի: Այսօր կղզիին ամենէն հիւսիսային տարածաշրջանին մէջ կը գտնուի այդ խարխիւը, ուր շուրջ 150 ամերիկացի զինուորներ մնայուն բնակութիւն հաստատած են, եւ հոն տեղադրուած են հիթլերային գաղափարներ եւ տիեզերական դիտարկման գերարդիական համակարգեր:

Ահաւասիկ, Վենեզուելայի գրաւումէն ետք, Թրամփ մտադրած է ամէն գնով կու տալ Կրիւլանտը: Այս մասին, ան Տաւոսի (Չուիցերիա) Համաշխարհային տնտեսական քառամտողովին իւրայատուկ թրամփեան ռոճով եւ քմահաճոյքով միւելոյն յանկերգ երգեց: Ըստ Սպիտակ տան վարձակալին, Կրիւլանտի բացերը կը փրտան ռուսական եւ չինական նաւեր, որոնք սպառնալիք են՝ Միացեալ Նահանգներու ազգային անվտանգութեան տեսանկիւնէն դիտուած:


Շար.ը՝ էջ 6

ՎԱԶԳԷՆ Ա. ՎԵՀԱՓԱՌ (ԽԴ.)

«Է»-Ն ԻԲՐԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆ

Ինչո՞ւ «Է»-ն ե ոչ թե ուրիշ մը... Խօսքը չի վերաբերիր այն դրոշակներուն եւ զինանշաններուն, որոնք պետութիւնը կը խորհրդանշեն, այլ անոնց, որոնք, իբրեւ ազգային միասնակա-նութեան խորհրդանիշ, իբրեւ ազգային սրբութիւն կը գետեղ-ւին նաեւ պետական դրոշներու եւ զինանշաններու վրայ:

Էջմիածին, 1978. Յունուար «Թարգմանչաց տօ-ներ»-ու ծիրին մէջ տարին երկու անգամ, տիկիկներու եւ ընկերուհիներու ըն-կերակցութեամբ Վազգէն Ա. վեհափառին կ'այցե-լէինք՝ մէկը յունուարին, Ծննդեան տօնին, միւսը՝ մայիսի սկզբին Յամբարձ-ման տօնին առիթներով, որոնց պարտադիր միշտ ներկայ կ'ըլլար նաեւ՝ Խորհրդային Յայաստանի Կրօնից նախարարը: Վե-հափառ հայրապետը այն-քան ջերմութեամբ ու մտերմաբար կ'ընդունէր ու կը հովանաւորէր մեզ, որ նոյնիսկ իր ներկայացու-ցիչները կը դրկէր «Թարգ-մանչաց տօներ»-ու նա-խաձեռնութիւններուն: Եր-բեմս մեզի հետ կու գար նաեւ Սիլվա Կապուտիկ-եանը, որ շատ մօտ էր վեհափառին: Այդ օր, երբ պատահաբար Կրօնից նախարարը ներկայ չէր, վեհափառը իր հիւրասրահին մէջ ըստ արժանաւորն ընդունելէ ետք մեզ, տարաւ եւ ցոյց տուաւ վեհարարին նախասրահի պատին մէջ ամրացուած, միջին մե-ծութեամբ (մօտաւորապէս 70x50 սմ.) եւ իր պատուերով իրա-գործուած կիրառական արուեստի երկու գեղեցիկ նմոյշներ, որոնցմէ առաջինը խաչքար մըն էր, իսկ երկրորդը՝ այբուբենը,



Վազգէն Ա. վեհափառ հայրապետ



«Թարգմանչաց տօներ» շարժման անդամները Վազգէն վեհափառին եւ Սիլվա Կապուտիկեանին հետ

երկուքն ալ ոսկեծոյլ ու աղամանդակուռ թանկագին քարերով նաշխազարդ: Սակայն մեզի համար մեծագոյն անակնկալն ու առաւել ցնցիչը այն եղաւ, որ վեհափառը մեզ ցոյց տուաւ նաեւ համեմատաբար փոքր (մօտաւորապէս 14 կամ 15սմ. բարձրութեամբ) բրգաձեւ ոսկեծոյլ առարկայ (obelisk) մը, որուն վրայ եւս ուղղահայեաց կերպով դրոշմուած էր այբուբե-նը, դարձեալ նաշխազարդուած՝ աղամանդակուռ թանկագին քարերով: Մենք համախմբուած էինք իր շուրջ, եւ մեզմէ իւրա-քանչիւրը կը փորձէր անելի մօտեն տեսնել այդ փոքր մասուն-քը: Վեհափառ հայրապետը բացատրեց, թէ Պօլսոյ պատրիար-քարանը այցելելու առիթով, օրուան պատրիարքը նուիրէր է իրեն այդ բրգաձեւ այբուբենը՝ ըսելով «Տար Էջմիածին, փրկէ այս մասունքը, որովհետեւ ասիկա նախաձեռնած ու շինել տուած են Դանիէլ Վարուժանը, Սիամանթօն, Ռուբէն Սեւակն ու անոնց ընկերները, այբուբենի ստեղծման 1500-ամեակի առիթով»: Վեհափառը՝ ատկէ ներշնչուած, Էջմիածնի գանձա-տան մէջի գոհարեղէնները կը հաւաքէ ու կ'որոշէ շինել տալ ոսկեծոյլ խաչքարն ու այբուբենը: Մեր տպաւորութիւնը մեծ էր ու ոգէշնչող, մենք կախարդուած էինք...: Յանկարծ, այդ գեր-լարուած պահուն, ան կանգ առաւ, գլուխը բարձրացրեց, թե-թեւ մը մօրուքը շփեց ու նշանակալից հայեացք մը պատցնելէ ետք ներկայներուն վրայ, մատնացոյց ընելով «Է» տառը ըսաւ.

- Մեր ոսկերիչ արուեստագետները, անելի քնքշութեամբ ու նրբութեամբ են իրենց 7-րդ տառը՝ «Է»-ն, որովհետեւ դա մեր ազգային հոգետոր արժեքների ու հաւատքի Էութիւնն է, սուրբ է ու խորհրդանշում նաեւ Աստուծոյ ներկայութիւնը մեր մէջ... : Յանկարծ ինչեցի, որ Էջմիածնի Եղեռնի յուշարձանին վրայ նոյնպէս «Է» տառը կայ: Չկրցայ ինքզինքս զսպել եւ ընդմիջե-լով հանդերձ զինք, ըսի.

- Վեհափառ տէ՛ր, վանքի բակում գետեղուած Եղեռնի յուշ-արձանի վրայ եւս «Է» տառը քանդակուած է... ի՞նչ կապ ունի Յեղասպանութեան հետ...:

Անգամ մը եւս իր պատկառելի հայեացքը պտտցուց մեր վրայ, խոր շունչ քաշեց ու ամենայն հանդարտութեամբ շարու-նակեց.

- Այո՛, Եղեռնի յուշարձանի վրայ «Է» տառը դրուել է, որով-հետեւ յանուն «Է»-ի, յանուն մեր ազգային հոգետոր արժեքնե-րի ու ինքնութեան, յանուն մեր հաւատքի ու Էութեան պահ-պանման, մկնուկէս միլիոն զոհ տուինք 1915-ին: «Է»-ն դրոշմը-լած է նաեւ Սուրբ Էջմիածնի խորանի ճակատին, որ մեր եկե-ղեցին պահպանել ու պաշտպանել է դարերու ընթացքին, որ-պէս ազգային Սրբութիւն սրբոց:

Այդ օրը միայն տօնական չէր մեզի համար, այլ վեհափառ հայրապետին օրինութեամբ կայացած խորհուրդներով լի հո-գեպարար պահ մը... բախտով:

Հոգեպաշտ լիացած, հաւատքով ամրապնդուած ու աստիճան մը անելի իայացած, թէեւ հրաժեշտ տուինք վեհափառ հօր, այ-նուամենայնիւ ան դուրս եկաւ մեզի հետ, տարաւ Եղեռնի յուշ-արձանի դիմաց, եւ բացատրելէ ետք անոր վրայ պատկերուած «Է»-ի Կենց ծառին, Արծիւին իմաստն ու բովանդակութիւնը, ցոյց տուաւ մեզի յուշարձանին կողքին գետեղուած եւ Խրիմ-եան Յայրիկի յիշատակին նուիրուած կոթողը եւս եւ մեր ու-


շաղրութիւնը իրաւի-րեց անոր վրայ փո-րագրուած հայրենի հողին վերաբերող մասին մակագրու-թեան, զոր նոյնու-թեամբ կը մէջբերեմ. «Ահա թողում ձեզ մշտախօս կտակ, որ հայն իր հայրենա-տուր հողէն չբաժնը-ւի, զի հողը պետք է: Կենաց եւ մահու օր պիտի գրկէ Յողն» - Յայրիկ:

Ապա վեհափառը անելցուց. - Յայրիկի այս խօսքերից յետոյ նրա «Երկաթէ շերտի» պատգամը անելի իմաստալից ու այժ-մեական է հնչում...: Այսպէս էր Վազ-գէն վեհափառը, որ իր ջիւղ հայրենասի-րութեամբ, ջրդեղուած ամուր անհատականութեամբ, բանի-մացութեամբ ու հայրական վարուելակերպով յարգանք ու ակ-նածանք «կը պարտադրէր» մեզի... եւ ոչ միայն մեզի...:

Այս բոլորէն ետք, ինծի կը մնար ուսումնասիրել «Է» տառին իմաստն ու դերը հայ մշակոյթին մէջ: Այդպէս ալ ըրի: Պարզուեցաւ, որ Ուխտասարի եւ Գեղամայ լեռներու ժայռապատկերներու վրայ պարբերաբար կը հանդի-պինք «Է» տառին, սակայն մեզի համար ամենէն յատկանշա-կանը Մեծամօրեան ժայռապատկերներու վրայ դրոշմուած «Է»-ն է, պատկերուած՝ այլ երկու կարեւոր խորհրդանշաննե-րու (եռանկիւնի եւ հաւասարակողմ վարդէակի) կողքին:

Հոս փակագիծ մը բանալով պետք է տեղեկացնեմ հետեւ-եալը: Երբ Երեւանի «Նեմեսիս» յուշարձանի գետեղումը նա-խաձեռնող տղաքը՝ Արմէն Գեորգեանն ու Կարէն Արիստակէ-եանը ինդրեցին ինձմէ «Է» տառը մեկնաբանել, չէի կրնար մերժել: Անոնք Նեմեսիսէն ետք որոշած են կառուցել այս ան-գամ Սողոմոն Թեփիբեանի յիշատակին նուիրուած յուշարձան մը, որուն մանրակերտը պատրաստ է արդէն տաղանդաւոր քանդակագործ՝ Յակոբ Ճանապագեանի հեղինակութեամբ, այդ կոթողի ճիշդ ճակատին դրոշմած է «Է» տառը: Որովհետեւ յա-տուկ պատասխանատուութիւն կ'ենթադրէ «Է» տառը հանգա-մանօրէն վերլուծելն ու մեկնաբանելը, որոշեցի անգամ մը եւս այցելել Էջմիածին ու Մեծամօրեան ժայռապատկերներ:

Թանգարանի կառուցումէն ետք, Յայաստանի մշակոյթի նախկին փոխնախարար՝ Նարինէ Թուփիկեանի հետ փորձած էինք այցելել Մեծամօր, սակայն իշխանութիւնները թոյլ չէին տուած... «ապահովական» նկատառումներով: 2024-ի յունի-սին դարձեալ Նարինէի հետ էի, նախ այցելեցինք Էջմիածին լուսանկարելու համար Եղեռնի յուշարձանն ու Վազգէն վեհա-




«Է» տառը Մեծամօրի ժայռապատկերներուն վրայ

փառի դամբարանը, ապա ուղղուեցանք դէպի Մեծամօր: Այս անգամ հեշտութեամբ տեղ հասանք: Թանգարանը լաւ կազ-մակերպուած էր ու ներկայանալի: Մեզ ընդունեցին ջերմու-թեամբ, բացատրելէ ետք ամէն ինչ ցոյց տուին նաեւ ժայռա-պատկերներու տեղը: Ի՛նչ ըսեմ, սրտի կսկիծով պիտի նշեմ, որ ժայռապատկերները կիզիչ արեւու ու հողմերու քմայքին տակ լքուած վիճակի մէջ են, եւ անյապաղօրէն ֆիզիքապէս զանոնք պաշտպանելու ու փրկելու կարիքը կը զգացուի... յատկապէս «Է» տառը իր յարակից երկու միւս խորհրդանշաններով... :

Հետագային իմացանք, որ Վազգէն վեհափառը այնքան բարձր կը գնահատէր «Է» տառի սրբութիւնը ու կ'առնէր զայն հայ քրիստոնեա-կան հաւատքին, որ իր կտակին մէջ կը թելադրէ իր մահէն ետք իր դամբարանքարին վրայ փորագրեն խաչը, իսկ խա-չին վրայ քանդա-կեն «Է» տառը:

Իսկ 2016-ին, երբ Չանգեզուրի գա-ցիքը տրկնուցւ՝ Էլոյին, եւ լաւ ըն-կերներէն՝ հնա-գ է տ - պ ա տ մ ա - բան Վազգէն Գեորգեանի հետ, այցելելու համար Զարահունջի հա-գարամեայ աստ-



Վազգէն Ա. վեհափառի դամբարանքարին վրայ պատկերուած «Է» հայկական խաչին վրայ



Մովսէս Յերկելեան Մեծամօրի անդրակներուն վրայ

դադիտարանն ու Ուխտասարի ժայռապատկերները, Վազգէ-նը Գորիսէն դէպի Մեղրի տանող ճանապարհին կանգնեցուած յուշարձան խաչքար մը ցոյց տուաւ մեզի, անոր վրայ եւս «Է» տառը կար: Մեր միջնադարեան բազմաթիւ ու բազմատեսակ խաչքարերու վրայ յաճախ կը հանդիպինք տարբեր ոճաւո-րումներով «Է» տառերու, սակայն այս մէկը իւրայատուկ էր ու յատկանշական, որովհետեւ խաչքարը գետեղուած էր Վազգէն վեհափառի այդ տարածաշրջանը այցելելուն առիթով, իսկ «Է» տառը անոր վրայ դրոշմուած էր իր յատուկ թելադրանքով: Այո՛, Վազգէն վեհափառը այսքան բարձր կը գնահատէր ու կ'արժեւորէր «Է» տառն ու անոր խորհուրդը: Եւ քնաւ պատա-հական չէ, որ մինչեւ այսօր «Է» տառին կը հանդիպինք բազ-մաթիւ, թէկուզ ժամանակակից կոթողներու վրայ եւս... իբրեւ ազգային միասնականութեան խորհրդանշանի:

Թէեւ այլ խորհրդանշաններ եւս (ինչպէս՝ Արարատ լեռը, Նուռը, անմահութեան նշանակը, վիշապաքարը, խաչքարը, որդան կարմիրը...) կարելի է առաջարկել իբրեւ հայկականու-թեան ազգային խորհրդանիշ, այնուամենայնիւ սակայն իր իմաստային բովանդակութեամբ, ցեղային պատկանելիու-թեամբ, եւ մանաւա՛նդ իր ուրոյն բնոյթով յարմարագոյնը «Է» տառը կը թուի ըլլալ: Հակառակ անոր որ «Է»-ն հինէն ի վեր, պատմական խորքերէն՝ մեր ցեղային արմատներէն բխող,



Ապարանի շրջանի Եղիպատրուք գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ճիշդ ճակատին պատկերուած է «Է» տառը

ազգային մեր գոյութեան գրաւականն ու մեր հաւատքի Էու-թիւնն իսկ հանդիսացած է, դեռեւս կը շարունակէ լուսանցքի վրայ մնալ... մեր մշակոյթի մէջ: Չեւ գիտեր ինչո՞ւ շատերու կողմէ նոյնի՛սկ կ'անտեսուի... ու մոռացութեան կը մատուի:

Ինչո՞ւ Զանաւայի (Մելիլը ծառի տերեղէ), Թուրքիոյ (Հիկե-թեանի աստղը), Սինկափուրի (Օրգիտե ծառիկը) եւ կամ Լի-բանսի (Մայրի ծառը) նման խայտաբղետ ազգաբնակչութիւն ունեցող երկիրներ, առանց ազգային պատմական հիմքի կըը-ցած են ունենալ իրենց միասնականութիւնը ամրապնդող խորհրդանշան մը, իսկ մենք՝ ոչ...:

Ինչո՞ւ պատմութեան ընթացքին հայութեան նման հալած-ւ-ած ու տառապած, նորակազմ պետութեան տեր, սակայն աշ-խարհի հնագոյն ժողովուրդներէն մէկը՝ իրենանք, պիտի կա-րողանան ունենալ իրենց ազգային միասնական խորհրդա-նշանը իսկ մենք՝ ոչ... հակառակ անոր որ պատմականօրէն մենք շատ անելի հարուստ ենք ազգային եւ հոգետոր խորհըր-դանշաններով, քան՝ իրենք:

Հակառակ անոր որ իրեններու ազգային պատկանելիու-թիւնը առաջին հերթին եւ ամէն բանէ վեր, պայմանաւորուած է կրօնքով՝ Մովսիսականութեամբ, անոնք իրենց կրօնական խորհրդանշաններէն որեւէ մէկը (Matzevot. Challah, Mezusa, Shofar, Torah, Memorah...) չորդեգրեցին իբրեւ ազգային միաս-նութեան խորհրդանշան: Այլ որդեգրեցին Դաւիթ թագաւորի գիտութիւններուն վահանին վրայ պատկերուած վեց թեւանի աստղը՝ (իրարու մէջ ագլուցուած երկու հաւասարաթափ եռան-կիւնիւն), որ Սողոմոն Իմաստունի կնիքին վրայ եւս ի յայտ կու գայ: Հակառակ անոր որ պատմականօրէն իրենական ազ-գային խորհրդանշանը չէ եղած եւ նոյնիսկ Հին Կտակարանի՝ «Թանախ»-ի մէջ եւս չի յիշուիր վեց թեւանի աստղը, անոնք 17-րդ դարուն յատուկ որոշումով ընդունեցին զայն իբրեւ «Դաւիթի աստղ», որ ոչ միայն դարձաւ իրենց ազգային միաս-նականութեան խորհրդանշանը, այլ երբ անկախութիւն ձեռք բերին, գետեղեցին զայն նաեւ իրենց պետական դրօշին վրայ:

ԿԱՐՕՏԱԽՏԻ ՄԱՅՐՈՒՂԻՍ Կ'ԱՆՑՆԻ ԱՌԻՆՔՆՈՂ ՀԱԼԷՊԷՆ



Որքան փորձեցի վանել հոգիս եւ մտքի տեսողաշտեւ ծննդավայրիս քաշողական թովչութիւնը: Զյաջողեցայ: Վտարանդիութեան առաջին օրէն կոյս տենչանքներս թեւածեցին՝ հետագօտելու հիւրընկալ Նոր ափունքները: Սակայն ծննդավայրիս վերադիրներու խլացնող ամպրոպի գոռոցին ներքոյ, ուր Զալէպ եւ Սուրիոյ բառերուն զուգորդուեցան՝ անզուգական, ասպնջական, հիւրընկալ, օրհնաբեր եւ չնաշխարհիկ մակդիրները, քցցանեցին հոգիս ու անբաժանելի մաս դարձան ո՛չ միայն արտայայտութեան մը ձեւի, այլեւ անքակտելիօրէն մէջս ամրագրուեցան՝ որպէս կենցաղային նկարագիր ու հոյարտութիւն:

Զալէպ դարձաւ անբուժելի ժաիր մը, որ հանգչած խոկումներու ընթերցիս մէջ, փորձեց կրծել իրձերս՝ մշուշապատելով շշնջացած ամէն մէկ բոյր, ամէն մէկ տեսարան, ամէն մէկ դիմագիծ, որ զիս կը փոխադրէր եութեանս գոյաժման ամրոցը՝ ծննդավայրս:

Օրեր անցաւ, տարիներ սահեցաւ՝ մտաբերելով ծննդավայրի օրրանս, սպասելով խապրիկ մը, որոճալով ետին ձգուած յիշատակներ, փորձելով վերականգնանալն իմ անբիծ կենցաղ, աղօտած դէմքեր, մակագրուած վայրեր: Ծննդավայրի արգասիքէս ժայթքող անմեղունակ մեղքերս անգամ, քննտած, զիս մինակ ձգելով, թեւածելով հառաչանքներու ալիքներուս վրայ, ափալ-թափալ թաքնուեցան օտարութեան Նորօրէնայ մրոտած խորհրդածութիւններուս ներքեւ:

Այսպէս, անկեղծ ըլլամ եւ խոստովանիմ, որ ծննդավայրս, ուր մանկաբարձի ձեռքին հանգչած աղիողորմ առաջին ճիւղ արձակած եմ, արարած եմ, հասակ նետած, ըմբռնիւած անոր բարիքները, մէջս ապրեցաւ որպէս հայրենիքի համարժեք զուգահեռ իմացութիւն:

Մինչ կարօտախտի գերանդին ամէն օր կը մաներ յիշատակներու շղարշս՝ փորձելով պոկել անոր ներքեւ անթելուած ու ամբօրէն ամրագրուած մայլ յուշերն անգամ, ջանալով զանոնք մէկտեղել օտարութեան «ոսկեայ ճաղերու» վանդակին մէջ:

Իսկ մոռացութեան ժանիքը անզուօթէն իր սարդոստայնը կը հիւսեր կոտտացող հալէպաբաղձութեան բաց խոցիս շուրջ՝ հակառակ արձակած վայնասունիս եւ կարեկցեալ աղերսանքներուս:

Մեծ ճիգ թափեցի, որ ծննդավայրի հետ զօդող պորտակապը չբեկանեմ, սակայն գործնականօրէն յումպէտս վատնեցի տուն դարձի գաղափարը, հակառակ անոր որ տուն դարձի ճամպրուկներս ամրացած էին օտարութեան կայմի անթելուած խարխիսին ու պատրաստ խոյանալու՝ յոյսերու եւ ցնորքներու թոհուրթիի սաւառակով դէպի օրրան:

Բաղձանքներս, ցայտող շատրուանի նման, հեգաճկուն, արագ-արագ յիշատակներու կաղամբաբեր դուրս սահեցան: Միակ սփոփանքս դիւթիչ անցեալը որոճալով, անոր դրոշմը պեղելով արարելն էր՝ կշտամբելով ինծի վիճակուած բախտ, որուն անողոք մագիլներուն կը փորձէի անձնատուր չըլլալ:

Այնքան անգօրութեան բարդոյթով կլանուած կը զգայի, որ կը փորձէի չվանել յիշատակի շիթեր, որոնք կը ծորէին գանկիս կարօտի բջիջներու սարդոստայնէն, կարծես հերձաժողի մեկուսարանի ճաղերուն ետին յայտնուած ըլլայի:

Հակառակ յուշը մշուշի չվերածելու յամառ ճիգերուս, աւա՛ղ, անոր բեկորացած ցօղերը յումպէտս ցնդեցան օտարութեան երաշտ ովափսի խլեակներուն մէջ՝ հազիւ ձգելով պատառիկ մը յիշատակներու աղօտած շղարշէն:

Ընդունեցի, որ կոչուիմ անցեալի մէջ ապրող թշուառական, բաղձանքոտ հէք գաղթական, կարեւորը կրկին ընձեռնըւեր այն պատեհութիւնը, ուր պիտի ապրէի Զահրատի ողջագուրման տենդագին պատեհ պատկերը.

«Զաղաց - օր մ'ալ կու գամ հարկաւ թուշս դնել մայթերեդ մէկուն, Կարօտս առնել - անցած օրերու մենութեանս վրայ լալ...»:

Ինծի համար անցեալի մէջ ապրիլը քմայքի խնդիր չէր, այլ բալասան»:

Հալէպաբաղձութեան կրծող տենչը, վրան գումարած հայաստանաբաղձութիւնը, մանաւանդ երբ հողմ մըն ալ մրկելով, մարեց հազիւ պլպլացող տուն դարձի երագս, ուր անհամատեղելի արհաւիրքէ կ'անցնէր ծննդավայրս, եւ հեռակայ կարգով անմիջական սատար կանգնելու անգօրութիւնս խոփի նման կ'արգելակէր յուշերու արտիս մէջ արօրս անկաշկանդ վարելու հաճոյքը: Այսպէս, անկարողութեան հեծեժանքով ապրիլը պժգանք կը յառաջանքեր մէջս:

Քարշ տալով վիճակուած այս տհաճ կեանքի ձեւը՝ փորձեցի վանել ամէն պատկեր, բոյր, դէմք, հանգստարան եւ կամոյց, որ կը խայթահարէր ձեւաւորուած ողորմելի, անպաճոյճ աշխարհս:

Վերջապէս, կարօտախտի ժաիրի կոտտացող այրուցքս յաղթանակեց՝ կլանելով խայտացող դարձի մորմոքս:

Բարեբաստիկ առիթով մը, Նորահաս տատ երկրակամարես՝ քանատական ուտաններէն, Սուրիահայութեան օժանդակութեան մարմինի ծառայութեան աշխատանքին նուիրուելով, այդ նուիրական ակօսէն համեմատական յագեցում գտայ՝ այդ աշխատանքներուն ընդմէջէն ուրուագծեւորվ տունդարձի ճեպընթաց մը: Լոկ երազանքով յագուրդ ստանալը հազիւ զիս կը հասցներ միայն ըղձանքի մը լիութիւնը ապրելու սոսկական բաւարարութեան:

Իրողապէս կարօտախտը դարձաւ հայկական բանաստեղծութեան հիմնական առանցքը, անոր հոգիին մէջ անթելուած կրակը, որ մէյ մը կը շիկանայ, մէյ մը կը խամրի:

Հանգչելով յուշերուս քարափին վրայ, կարծեցեալ վաղանցուն կարօտի ցաւերու անդոհանքս գրկելով, անձկութեամբ հառաչեցի՝ յիշելով Ռուբէն Որբերեանի անմահ տողերը.

«Կեանքի նաւակն հետք չողողց իր ետին, Սոռաջումը առա՛ւ ինձմէ՛ ամէն բան, Զին երազներս ամպերու պէս կ'անհետին, Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նման»:

Այս հոգեպարար սրտաբեկ դրուագներու ու աղամանդեայ հեքիաթային յիշատակներու ուխտագնացութեանս երբեք պիտի չփնտռեմ ուղղորդող աստղ մը, քանի ճեպընթացութեանս միակ ուղեւիշ գիսաւորս կ'անցնի Զալէպի վերեւ:

Յոգնաբեկ, յիշատակներու ժանգոտած գանձարանս գրաւական կը դնեմ վտարակնի գերեզմանին առաջ հօրս՝ իմ բազիկին, որ մէջս սերմանած է բարոյական արժէքներու հունտեր, որոնք կարեւորագոյնն էր՝ ծննդավայրի հանդէպ հաւատարմութիւն, ծառայութիւն ու գորով: Հետեւաբար արիաբար պիտի թռչիմ օրրանիս քաղաքամասի մայթերէն՝ դեգերելով Սալիպէի արահետներէն, անցնելով միջնաբերդի՝ Սուլամանիէի հին ու Նորը կամրջող ոստաններէն, հասնելով Նոր Գիւղի հայկական երեւելի ու անտեսանելի քարակոփներու կրանիթէ կամք մրճահարող, երանաւետ, ոգեղէն ապարանքներէն ու խալտոտ ածուներէն:

Թախանձագին հառաչելով՝ թաթախուէի Զալէպի բերդի անդնդախոր խրամատին փոշիով, ապա հողամաղի դրոշմերը լուայի Դելլանի գուլալ աղբիւրին ջուրով:

Հշտագին հալէի քիմքիս վարդի անուշի քաղցրահամ տակառին մէջ՝ թելէ պանիրի լծորդութեամբ պատուաստուած, համտեսելով հարազատ համը ծննդավայրի ինքնութեան տեսչերուս՝ որպէս սպեղանի անդնդախոր կսկիծներուս:

Անցնէի քաղաքապետարանի մարգաղաշտէն, ուր պիտի լսէի՝ ՀՍՀՄ-ի յաղթանակներու ցնծութեան կոչերն ու տողանցողներու շքերթի թնդիւնը ամենի:



Ա՛հ, ման գայի Նոր Գիւղէն դէպի քաղաք տանող շաւիղներէն ու լիաթոք, ի սպառ շնչէի կիրակնօրէնայ հայկական քեպպայի ծիսակի ծուխը զգլխիչ:

Ըմպէի՝ Եփրատէն մատակարարուող տանս ծորակի ցայտկլտացող գուլալ ջուրը՝ հայրենաբաղձ հոգիիս պապակը յագեցնելով:

Շատ իրաւացի էր ատենօք Զալէպի մէջ գործող հանգուցեալ սասունցի տէր Սկրտիչ Սուրատեանը, որ հաւանաբար այդ պահուն կը մըմնէր.

«Թեքուէի աղբիւրին, Կարօտած պաղ ջրին, Լիւնէի հանդերում, Մեր կանաչ մարգերում, Ուր ծաղկունքն են բուրում, Ուր մանուկ օրերում, Զովն էր ինձ միշտ համբուրում»:

Ան այնքան հարազատ ու ինքնաբոլիս պոռթկումով պետական ջուրի ընկերութեան հարկահաւաքը կը յանդիմանէր, երբ եկած էր իր տանը ըմպելի ջուրին հարկը հաւաքելու՝ ըսելով.

«Ի՞նչ համարձակութեամբ եկած ես դրամ կը պահանջես: Դուք լա՛ւ պետք է իմանաք, հայերս կ'ըմպենք մեր Պինկոյի եւ Արածանիի ջուրը: Արդե՛օք մէկը, որ կ'ըմպէ իր հարազատ երկրի աղբիւրներուն արգասիքը, այդ մէկուն համար գումար պիտի մուծե՛... Ես կը մերժեմ վճարում ընել անոր համար»:

Գզուէի թաղի մուրաճ տողանցող փետրուարեան ամեհի կատուները, որոնք խարխափող քայլերով պարարտ առնէն մը որոգայթի մէջ առնելու դաւադիր ծրագիր կը մշակէն:

Տեսնէի Զայ ծերանոցի մուտքին ընծայաբերուած մատաղները, ու հոգիս կարօտախտի ժաիրով վարանուած՝ խանձարուրէի այդ մատղաշ գառի շամփուրով, աւելի ուշ՝ խնկելով օճախէն քուլայ-քուլայ բարձրացած շուարած ծուխի ծուէնները՝ որպէս դճաւտոմս յոգնաբեկ կարօտի ժաիրի:

Խաղաղօրէն ունկնդրէի երաշտ հոգիիս ընթերքէն կարօտի չորցած շեղջի խշշոցներու մեղեդին, որ միայնառնուած օժիտ կրելու շքերթի սուլոցներուն եւ հինայումի գուռնայի փչոցին՝ կը զարթնեցնէն անտարբերութեան ուկիանոսին մէջ մրափող հէք կենցաղս ու մեղրածոր աղբիւրի թրթռացումով կրկնէի մարտիկի պսպղուն բառերը.

«Թռչի մտքով տուն, Ուր իմ մայրն է արթուն, Տեսնէի այն առուն, Կարօտով ես անհուն, Որ ամէն մի գարուն Ձրերով վարարուն, Կարկաչում էր սարերում»:



Երկիւղած, օժանուէի Քուէյք գետի զարշափոտութեամբ՝ լուալով յուռթի խամրող յիշատակներս, հասնելով «Արամ Մանուկեան» ժողովրդային տան փարթամ սեմին, յիշատակարաններուս փրկութեան լաստին:

Չնաշխարհիկ ապրումներէս անմասն չեն կրնար մնալ «կարծեցեալ պակասամիտներն» անգամ, «պիս-պիս նաւ» հորէնը, հասնելով «եանասիպճի» Օսկոյին, որոնք կը ներկայացնեն պարզունակ դիմագիծը ժամանակահատածի մը, որոնք իրենց համեստ պահուածքով կը պարունակէին չակնկալուած իմաստութիւնն անգամ՝ միայնառնուած երգիծանքով եւ արուեստի ամօթխած պատառիկներով: Այսպէս, Օսկոս՝ Աւետիք Իսահակեանի «Օտա՛ր, ամայի ճամբէքի» դիւթիչ երգեցողութիւնը, բանադրանք էր բոլոր անոնց, որոնք զինք կը դասէին որպէս սոսկ միմոս մը:

Իսկ հորէնը ծաղրածուի արտաքին կերպարանքով, Պարպարա եկեղեցւոյ դիմացի շէնքին տանիքի խցիկին մէջ առանձնացած, պարո-տաք չըսելով, իր կարճ սկաւուտական տաբատով, հանդիսացած էր Սուլէյմանիէի ինքնութեան դեսպանը՝ կառնոշը, որ ի գարմանս «թերաճ ուղեղին» ամբարած էր անոր մէջ շրջապատի բոլոր հարազատներուն եւ թաղեցիկներուն ծննդեան թուականները:

Այսպէս, սպասելով կռունկի ժամանման, բացագանչելով Նահապետ Քուչակին հետ.

«Ի Պաղտատ կու գաս, կ'երթաս ի Սահրաթ, Թողթիկ մը գրեր եմ, տամ քեզ ամանաթ, Աստուած ալ թող վկայ լինի քու վրադ, Տարեալ հասուցես զայդ իմ սերելեաց, Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս»:

Այսպէս, մոլեռանդ հալէպահայու ջահը առկայժ պահելով՝ քաջաբար կրնամ արձանագրել, որ գաղթական հալէպահայը, իրեն հետ շալկած տարբեր գաւառներու բառաբարները եւ կենցաղային բարբերն ու սովորութեանց տարբերութիւններու ծաղկեփունջը, փոխանակ զանոնք յաւելեալ վիի յառաջացնելու գործնի մը վերածելու, հմտաբար կարողացաւ ուրոյն եւ միաձոյլ նկարագրի բողբոջման «Մայր գաղութ»-ի ածուն հանդիսանալ:

Այդ մէկը յղկուեցաւ անձնդիր հոգեկներտներու եւ դարբնուեցաւ վաստակաւոր դաստիարակներու ոգեղէն պատուաստներով:

Այսպիսով, ձեւաւորուեցաւ հալէպահայու իւրայատուկ կերպը՝ դառնալով մակնիշ հայկական գուլալ աւանդութիւններու պահպանման ու լուսարձակման:

Այսօ՛ր ալ հալէպահայը, առաքինացնելով իր առօրեայ կենցաղը, յաջողեցաւ ներկայանալ որպէս պատուական անմրցելի դեսպան, հայկականութեամբ յղկացած տոհմիկ բարբերով ու գերբնական ճիգերով ամրացուց հետզհետէ մաշող հայկական դիպուկ վարքագիծը:

Հոս կ'արժէ փոխաբերաբար յիշատակել հորենացիի խօսքը հայ ժողովուրդի մասին՝

«Թեւ փոքր ածու մըն ենք եւ թիւով քիչ, բայց մե՛ր ալ աշխարհին մէջ կատարուած են մեծ գործեր՝

արժանի յիշատակութեան»:

Սիրելիներ՛, վտարանքութեան մղկալցող վիշտը, որ իր վերջին ձեւաւորումով կը վերածուի «կարօտախտ»-ի, կարելի չէ կիսել եւ նոյնիսկ ձերբազատիլ անոր կալանքէն: Ան կը մնայ ամբօրէն կպած անձիդ, ուր բոցավառ, մորմոքող հուրը միայն ինկած տեղը կ'այրէ:

Այսպէս, յիշողութիւնս համարելով ճգնաւորութեանս փորկութեան լաստս, իսկ ծննդավայրս՝ միևնուճար հանգստեան քարափս. ճամպրուկներս պատրաստ՝ կը թեւածեմ Զալէպի կարօտով:

Թեւ կ'ապրիքք առօրեայ սրտաբեկ իրողութիւններ, անհամատեղելի դժուարութիւններ, միայնառնուած ասեկոսէներու չարամիտ ժխորին, սակայն կը հաւատամ, որ եթէ նոյնի՛սկ անցեալի փարթամ Զալէպը վերածուի փոքր ածուի մը, ան պիտի մնայ կենսատու երանելի աւիշ համայն հալութեան:

ԺԱՆ ԶԱԼԼԱԾԵԱՆ

Թորոնթօ, 12 յունուար 2026

«Է»-Ն ԻԲՐԵՒ ԱԶԳԱՅԻՆ...

Շարունակում 4-րդ էջն

Այսօր հրեաները փոխան խաչի կամ մահիկի իրենց վիզեն կը կախեն «Դաւիթի աստղ»-ը, որ կը խորհրդանշէ. «Աստուծոյ փոխարեն Աստուծոյ օծեալի թագաւորութիւնը ամբողջ աշխարհի եւ ողջ մարդկութեան վրայ»: Անոնք Նոյնի՛սկ կրցան վերականգնել իրենց մեռած մայրեկի լեզուն: Ի՛նչը կը խանգարէ մեզ, որ մենք կարողանանք ընդունիլ «Է» տառը, իբրեւ մեր ազգային հաւատամքի եւ աստուածային Էութեան խորհրդանիշ, իբրեւ ազգային միասնականութեան սիմպոլ, գետնդէլ գայն թէ պետական դրօշի վրայ ու հպարտութեամբ կախել գայն նաեւ մեր վիզերէն... Թէկուզ հայկական խաչի վրան... ինչո՛ւ չէ նաեւ՝ գիրար ճանչնալու համար: Մանաւանդ որ պատմականօրէն ապացուցուած է, որ մեր ցեղային արմատներէն՝ դարերու խորքերէն յառնած «Է» տառը մեր եկեղեցին ընդունած է իբրեւ Սրբութիւն սրբոց, եւ իբրեւ աստուածային լոյս կը դրոշմէ գայն Յայ առաքելական եկեղեցւոյ խորաններու ճի՛շդ ճակատին, եւ կամ եկեղեցիներու մուտքի ճակտոնապատին, եռանկլիւնի մէջ, որմէ կը ճառագայթէ տիեզերաստեղծ աստուածային Լոյսը, որ սակայն արեւը չէ: Տիեզերական այն լոյսն է, որ ուղիղ կը համեմատի քրիստոնեական վարդապետութեան, որովհետեւ քրիստոնեական տիեզերաստեղծ աստուածութիւնը եւս, իր երրորդութեամբ հանդերձ, համակ լոյս է, սեր ու բարութիւն... :

Հաստատելու համար «Է»-ի աստուածային բնոյթը, մեր մեծագոյն մատենագիրներէն մէքերէնք քանի մը վաւերական վկայութիւններ:

Ա.- Կրնա՞յ պատահական ըլլալ Մեծն Նարեկացիի կարծիքը, որ ուղղակիօրէն կ'ըսէ.

«Ինքնագոյ «Է»-ի անունը Աստուած է»:

Բ.- Մոլեռանդ հակահեթանոս եւ քրիստոնեական ջինջ հաւատքի տըր՝ Եզնիկ Կողբացին եւս կը յիշէ, որ.

«Է- տառը եւ մի Էութիւնը մշտնջենական եւ եւ բոլորի գոյացման պատճառը»:

Գ.- Իսկ իր ժամանակի մեծագոյն գիտնականներէն ըլլալով հանդերձ, Անանիա Շիրակացին կ'աւելցնէ

«Ի սկզբանէ Էր «Է»-ն, անխզելի եւ բացարձակ...»:

Եւ ի վերջոյ մեր միջնադարեան հոգեւորականները հետեւեալ կերպով կը բացատրեն ու կ'իմաստաւորեն «Է»-ն:

«Է տառը անեղ (անեղծանելի)է ու անսկիզբ, անծին ու անժամանակ, անեզր եւ անմահ»:

Ահաւասիկ թէ ինչո՛ւ «Է» տառը մինչեւ հիմա մեր հոգեւոր հայրերու կողմէ կը գնահատուի ու կը մեծարուի իբրեւ ազգային հաւատքի Սրբութիւն սրբոց...

Ահաւասիկ թէ ինչո՛ւ մէկուկէ միլիոն հայեր Նահատակուեցան յառնու Սրբութիւն սրբոց «Է»-իւ:

Ահաւասիկ թէ ինչո՛ւ, ապա արդարահատոյց հերոսները ոչ միայն ձեռնարկեցին պատժել ու ոչնչացնել «չար»-ն ու աշխարհը վնասագերծել «չարութենէ», այլ նաեւ՝ պահել ու պահպանել աստուածային սիրոյ եւ բարութեան մարմնացումը հանդիպացող՝ Սրբութիւն սրբոց «Է»-ն, որ մեր ազգային հաւատքն ու ինքնութիւնն է...:

Ահաւասիկ թէ ինչո՛ւ, «Է»-ն արդարօրէն գետեղուած է նաեւ՝ Սողոմոն Թեւկիրեանի յիշատակին նուիրուած յուշակոթողին վրայ, որուն մանրակերտը պատրաստ է արդէն. կը մնայ Նախաձեռնել ու իրագործել գայն:

Սոկթեալ, 2024 ապրիլ

Յ.Գ.- «Է»- տառի եւ կամ առհասարակ «Է» հնչիւնի մասին եղած վերլուծումներն ու մեկնաբանութիւնները այսքանով չեն սահմանափակուիր: Եթէ խորանաք հարցին մէջ, պիտի նըշմարենք, որ «Է»-ի մեծարանքն ու պաշտամունքը տարածուած կը թուին ըլլալ նաեւ այլ մշակոյթներու մէջ: Օրինակի համար Շումեր-Աքքատական Երիտու, Էնգին, Էյա կամ Հայա աստուածութիւնները, հին յունական Դելփեան սրբարանի մէկ պատին վրայ փորագրուած է **«E ydos»** բառը, որ կը նշանակէ «Ծանիր գըեզ «Է» ով»: Եւ կամ հին կտակարանի եբրայերէն այն Նախադասութիւնը, որ կ'ըսէ. **«Էհիա Աշիր Եեհիա»**, որ կը թարգմանուի. «Ես այն եմ, որ Է-ն է»: Այս բոլորը եւ ուրիշներ եւս իրենց հնչիւնագիրներով ու իմաստներով՝ թէ ի՛նչ կապ կամ առնչութիւն կրնան ունենալ«Է»-ի հետ, մանրագնինն եւ մասնագիտական ուսումնասիրութեան կը կարօտին: Յատուկ ուսումնասիրման ու մեկնաբանման կը կարօտին նաեւ հին յունարէն «Ego», լատիներէն «Elementa», եւ հայերէն Էակ, Էգ, (արարած իմաստով), Էութիւն, Էական, Էացում եւ Անեացում բառերը. յատկապէս վերջին երկուքը, որոնց հոմանիշները գոյութիւն չունին այլ լեզուներու մէջ, ինչպէս կը հաստատեն հայ լեզուաբաններէն շատեր: Նոյնիսկ գոյութիւն ունի բաւականին բարդ ու կնճռոտ ընկալելի «Էիզմ» կրօնափիլիսոփայական (իմաստասիրական) հասկացութիւնը, որուն մասին գրուած են բազմաթիւ յօդուածներ, մենագրութիւններ եւ Նոյնի՛սկ գիրքեր: Այս մասին գուցէ այլ առիթով մը անդրադառնանք... հանգամանօրէն:

Նոյնը

ԿՐԻՆԼԱՆՏ՝ ԱՆՏԵՐՍԸՆԵԱՆ...

Շարունակում 3-րդ էջն

Նիւ Եորք, Չանգեզուր («Թրամփի ուղի՝ յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» - «Trump Route for International Peace and Prosperity» - TRIPP), կամ այլուր անտարած իր ներդրումներուն նման, Թրամփի համար Կրիւլանտն ալ մեծ անշարժ գոյքի գործարք մըն է, որուն համար ան կ'ուսումնասիրէ տարբերակներ, ներառեալ՝ երկարաժամկետ վարձակալութեան համաձայնագիր մը:

Կրիւլանտի վարչապետ Եսս-Ֆրետերիք Նիլսընի համար անընդունելի իրողութիւն մըն է, որ Միացեալ Նա-

հանգները գրաւեն այս վիթխարի կըդգին, մինչդեռ Դանիոյ վարչապետ Մեթէ Ֆրետերիքսըն աւելի մտահոգ է եւ կը զգուշացնէ, թէ ամերիկեան նման քայլ մը պիտի նշանակէ ՕՊԱՆ-ի աւարտը:

Ահաւասիկ Անտերսընէն ներշնչուած իրապաշտ հեքիաթ մը... «Կայսեր Նոր հագուստը» («The Emperor's New Clothes») անուան փոխարէն՝ ... «Կայսեր Նոր երկիրը» («The Emperor's New Country»), որ դժուար թէ քիշէ՝ «Եւ անոնք ապրեցան երջանիկ ու բարեբախտ՝ մինչեւ իրենց կեանքի վերջը» տողերով աւարտի:

ՕՐԱՏԵՏՐ

2 ՓԵՏՐՈՒԱՐ

- 1852 - Կարապետ Իւթիւճեան Պոլսոյ մէջ սկսաւ հրատարակել «Մասիս» լրագիրը, սկիզբը իբրեւ շաբաթաթերթ եւ յետոյ օրաթերթ: Թերթին աշխատակիցներ եղած են Յակոբ Պարոնեան, Տիգրան Կամսարական, Արտաշէս Յարութիւնեան, Վահան Մալեգեան, Սիպիլ, Արշակ Չոպանեան, Եղիա Տեմիրճիպաշեան, Երուանդ Օսեան, Սկրտիչ Աճեմեան եւ Գրիգոր Չօրապ:
- 1885 - Տնունդ գրագետ, արձակագիր, արուեստաբան եւ գրականագետ Կոստան Չարեանի (Կոստանդին Եղիազարեան), Շամախիի մէջ: Մահացած է 1969-ին, Երեւան:
- 1894 - Տնունդ դերասան եւ թատերագիր Վաղարշ Վաղարշեանի (Վաղարշակ Տէր Պօղոսեան), Շուշիի մէջ: Մահացած է 1959-ին, Մոսկուա:
- 1923 - Մահ գրագետ, խմբագիր, թարգմանիչ եւ հասարակական գործիչ Գրիգոր Չիլիսկիրեանի, Իզմիրի մէջ: Ծնած էր1839-ին, Իզմիր:



ԱՅՍՕՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 ԷՆ 95 MHz

- | | |
|---|--|
| 7.00- Զայերգներ | 4.00- «Գրքիս հետ» (Իրմա Տետեանի արխիւէն) |
| 7.03- Առաւօտ լուսոյ / Բարի լոյս | 4.20- Հայրենի սիրուած երգիչներու կատարումներ |
| 7.15- Հանդարտ երգեր | 5.00- «Վանայ Ձայն»-ը երեկոյեան |
| 7.30- «Երկու բարեւ» | 5.05- Չուզերգներ |
| 8.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ | 5.30- «Շողարձակ» (Շողիկ Թորոսեանի հետ) |
| 9.00- «Երկու բարեւ» | 6.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ |
| 10.00- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ | 6.50- Խանդավառ երգեր |
| 10.30- Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեսքով) | 8.00- Օրուան երգիչ («kami friends» խումբ) |
| 11.00- «Յանելուած» | 8.30- Նոր երգեր |
| 11.20- Արդի մշակումով ժողովրդային երգեր | 9.30- Հայկական աշխարհի լուրեր (կրկ.) |
| 12.00- «Հայեացքն Արցախին» (տեսանիւթ՝ դիմատեսքով) | 9.45- Հայրենի սիրուած երգեր |
| 12.30- Սփիւռքահայ երգիչներու կատարումներ | 10.00- «Գէորգ Մարգպետունի» (Բ. հաղորդում) |
| 1.00- Ազգային-հայրենասիրական երգեր | 10.30- «Երգ-երգոց»-ի կատարումներ |
| 1.30- Լուրեր - Առողջապահական խորհուրդ | 11.00- Իտալական երեկոյ |
| 2.00- «Յիշատակելիները» (խմբապետուիի Ողպէ) | 12.00- «Յիշատակելիները» / Յեղափոխական երգեր |
| 2.05- Յեղափոխական երգեր | 2.00- Ժողովրդային երգեր |
| 3.00- «Զըլ եմ պիոյմու». հիւր՝ Շոգէֆ Սայել (ուղիղ՝ դիմատեսքով) | 3.00- Կրկնութիւններ |
| | 3.00- Հայերէն այլազան երգեր |
| | 6.00- Հանդարտ երաժշտութիւն |

Ձեր մնայուն ընկերակիցը **Radio Voice of Van:Live**

DOWNLOAD



ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՒՆԶՈՆԱԿԱՆ

1. Սերոբ Աղբիւրի ծննդավայր Վիւղը - Զիւրու դարման:
2. Յօնք - Նրբոց:
3. Վայրի նարդոս - Իրեթայջոյրոյ տառեր:
4. Անխեղ - Հանդա լոս:
5. Էլ Կրեյոյի ծննդավայրը - Յատկութիւն:
6. Բոսոր - Նորա հաւատ, Նորա դարձ:
7. Դե՛հ - Զիւռ կլնակ:
8. Ոստերու ամբողջութիւն:
9. Աթենա սի վահան - Ջրային տարածք - Կանգնի՛ր:
10. Կցուուր - Խումբ:
11. Թաղիչ - Մայք Օհանեան՝ պատկերա սփիւռի համաձուն յայտագիրի մէջ:

ՈՐՈՂԱՅԵՑԱԳ

1. Զարդաձայն յօգուն - Թատրոնի խցիկ:
2. Շաղկապ - Խաղ - Հեռացի՛ր:
3. Դառնանք կամ մշա կել - Մահ կ:
4. Թթառձնատ - Դանակ սրելու քալ:
5. Եմենի քաղաքներէ:
6. Նպաստատու կողմորոշում - Նախանձի:
7. Գարշահուտ կենդանի - Լիբանանի լեռներէ:
8. Կռքնելիչ - Մոլթագլոք:
9. Տարածքի միատր - Դատարար - Այբութենէ:
10. Ուրազ - Դուրս գալու միջոց:
11. Գիրոց - Չխօսիլ:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

	7	5				
		4			8	1
1					7	
	3			4	2	
			2	5		
2		8	1			3
6	9		7			
		1	4		3	
					9	6

Երրորդականը եւ ուղղահայեաց օ շարքերով եւ սիւնակներով (ՃՁԹ) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը օ լատակուսի հաջուրդ օ բաժինների (ՃՁԹ): Բացառումի սկզբունքին կիրառւումով իւրաքանչիւր լատակուսի մէջ թուանշան մը գեռեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ օ լատակուսիմոց իւրաքանչիւր բաժին ունենայ մէկ օ թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խաւով՝ ո՛չ մէկ պարագայի արտօմուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու հաւաք՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ լատակուսիներում մէջ գեռեղուած են:

ՆԱՆՈՐԴ ԺԱՄԱՆՑԻ ԽԱՂԵՐՈՒ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Բ	Ա	Ա	Գ	Ա	Գ	Գ	Ա	Ա	Գ	Ա
2	Ա	Գ	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ
3	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ
4	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա
5	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ
6	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա
7	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա
8	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա
9	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա
10	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա
11	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա	Գ	Ա

	7	3	9	5	8	4	2	6	1
1	1	5	2	7	3	6	4	9	8
2	6	8	4	2	9	1	3	7	5
3	4	2	1	3	7	5	6	8	9
4	3	7	6	9	4	2	1	5	3
5	3	9	5	1	6	8	7	2	4
6	5	6	7	4	1	9	8	3	2
7	2	4	3	8	5	7	9	1	6
8	9	1	8	6	2	3	5	4	7

ՊԱՐԵԹՊՈԼ

ԱՅՍՕՐ՝ ԷՆ.ԷՍ.ԷՅ.-ՀՄԸՄ

Այսօր ժամը 16:45-ին, Ճիւնիի Ֆուտատ Շեհապ մարզադաշտի պասքեթ-պոլի դաշտին վրայ ՅԱԸՄ-ի տղոց պասքեթ-պոլի խումբը պիտի ըլլայ հիւրը՝ ԷՆ.ԷՍ.ԷՅ.-ի Խիոյեանութեան 17-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ:

ՅԱԸՄ, որ յաջորդող օրերուն 7 օրուան ընթացքին 3 մրցումներ պիտի կատարէ, շատ կարեւոր հանգրուանի մը մէջ կը գտնուի, ուր անպայման պէտք է յաղթէ իր մրցումներուն՝ վերագրաւելու 3-րդ դիրքը:



Այսօր ԷՆ.ԷՍ.ԷՅ.-ի, հինգշաբթի Մարիսթի (Շան-վի) եւ յաջորդ երկուշաբթի՝ Պէյրութ Ֆըրսթի դէմ (յետագում 15-րդ հանգրուանէն) մրցումներուն տղաքը լաւապէս կեդրոնացած պէտք է ըլլան եւ առիթ չտան Նախապէս քիչ մը «կորսուած» մրցումներու կրկնութեան:

Այժմ կեդրոնացումը այսօրուան մրցումին վրայ պէտք է ըլլայ, ուր մրցակից խումբը ամբողջովին վստահած է իր օտար երեք մարզիկներուն՝ ամերիկացի փլէյմէյքըր Մայքէ Ռիչըրտի (26 տարեկան) եւ սերպ գոյգին՝ Փեթար Ռաքիսեւիչի եւ սենթըր Շթեֆան Եանքովիչի: Այս եռեակը վերջին երկու

մրցումներուն ապահոված է ԷՆ.ԷՍ.ԷՅ.-ի 55 կետերը (միջին հաշուով), բան մը, որ կը դիրացնէ մեր տղոց գործը: Չանոնք չեզոքացնելով կրնանք շատ հանգիստ խաղալ եւ յաղթել մրցումը: ԷՆ.ԷՍ.ԷՅ.-ի բանալին Մայքէ Ռիչըրտն է, բայց Ռաքիսեւիչ իր կարգին շատ լաւ մարզիկ է: ԷՆ.ԷՍ.ԷՅ.-ի լաւագոյն լիբանանցի մարզիկն է Քրիսթոֆ Խալիլ:

ՅԱԸՄ-ի տղաքը վերջին մրցումներուն շատ գեղեցիկ խմբային խաղ կը կիրարկեն, եւ պայքարի ոգիով երթի մրցումին նման (100-92) կրնանք կըրկնել յաղթանակը: Շատ կարեւոր է մրցակից խումբին 3 կետնոց հարուածներուն ուշադրութիւն ընել:

«ՊՈՒՆՏԸՆԻԿԱ»

ՊԱՅԵՐՆ ՄԻՒՆԻՒՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԷՏԵՐ ԵՒՄ ԿՈՐՄՆՅՈՒՅ

Յաջորդաբար երկրորդ մրցումը ըլլալով, Գերմանիոյ ախոյեան Պայերն Միւնիխ կարեւոր կէտեր կորսնցուց, երբ 2-2 արդիւնքով հաւասարութիւն արձանագրեց «Փուլքսփար-քշթատիում»-ի մէջ Յամպուրկի հետ:

Յամպուրկի համար շատ կարեւոր էր այդ մէկ կէտը, որուն շնորհիւ 13-րդ դիրք բարձրացաւ: Պայերն շատ աւելի առիթներ ուներ, բայց Յամպուրկն մեծ թիւով առիթներ ստեղծեց իր կարգին: Պայերն անբախտ էր երկու անգամ ցնցելով Յամպուրկի բերդին ձողը, բայց Յամպուրկն ալ արժանի չէր պարտութեան:

Յերի Զէյն 42-րդ վայրկեանին նշանակեց Պայերնի հաւասարութեան կողմ, երբ փորթուգալցի Ֆապիօ Վիեյրա 34-րդ վայրկեանին բացած էր մըրցումին հաշիւը: Բ. կիսախաղին Լենարթ Զարլ փոխարինուեցաւ Լուիս Տիասով, որ անմիջապէս նշանակեց 2-1-ի կողմ:

53-րդ վայրկեանին խրուաթ յետսապահ Լուքս



Վուսըովիչ նշանակեց Յամպուրկի հաւասարութեան կողմ:

Լայպցիկ աւելի եւս ետեւ մնաց եւ 1-0 արդիւնքով յառաջանալէ ետք 2-1 արդիւնքով տեղի տուաւ Մայնցի դիմաց:

Նայիմ Ամերի եւ Սիլաս նշանակեցին Մայնցի կողմը: Վերջինս այժմ կը գրաւէ 16-րդ դիրքը: Մայնց անցեալ շաբաթ 3-1 արդիւնքով պարտութեան մատնած էր Վոլֆսպուրկը:

«ՓՐԵՄԻԵՐ ԼԻԿ»

ԱՐՄԵՆԱԼ ԵՒ ԼԻՎԵՐՓՈՒԼ ՅԱՂԹԵՑԻՆ

Անգլիոյ «Փրեմիեր Լիկ»-ի 24-րդ շաբթուան մրցումներուն, առաջին դիրքը գրաւող Արսենալ 4-0 արդիւնքով հանգիստ յաղթանակ արձանագրեց «Էլքլետ Ռուս»-ի դաշտին վրայ՝ Լիծի դէմ մրցումին:

Սուպիմենտի, Տարքով (սխալմամբ իր բերդին մէջ) Եոքերեշ եւ Կապրիել ժեսուս նշանակեցին առաջին դիրքը գրաւող Լոնտոնի ակումբին 4 կողմը:

Անցեալ տարուան Խիլըրփուլ 2026-ի իր առաջին յաղթանակը արձանագրեց «Փրեմիեր Լիկ»-ի մըրցումներուն՝ եւ 4-1 արդիւնքով շատ կարեւոր յաղթանակ մը արձանագրելով Նիքեմըլի դէմ:

Անթոնի Կորսըն 36-րդ վայրկեանին նշանակեց Նիքեմըլի եւ մրցումին առաջին կողմ: Ուկո Էքթեթիէ 2 վայրկեաններու ընթացքին փոխեց ամեն ինչ՝ նշանակելով 2 կոլ 41-րդ եւ 43-րդ վայրկեաններուն:

Ֆըրիան Վերց եւ Իպրահիմ Զոնաթ Բ. կիսախաղին 2 կոլ եւս նշանակեցին, եւ Լիվըրփուլ յաղթեց 4-1 արդիւնքով:



Զէյսի դժուար մրցում ուներ Ուեսթ Յամի դէմ եւ 2 կոլ ստանալէ ետք առաջին կիսախաղին, մրցումի վերջին 33 վայրկեաններուն 3 կոլ նշանակեց ժուա Փետրոյի, Զուքրուէլիայի եւ Էսգո Ֆերնանտեսի շնորհիւ՝ պահելով 4-րդ դիրքը:

«ԷՍ.ԷՍ.ԷՅ.»

ՀԱՅ ՄԱՐՏԻԿՆԵՐ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԱՐՉԱՆԱԳՐԵՑԻՆ



Զալիֆորնիա Նահանգի Զոմերսքաղաքին մէջ երէկ առաւօտեան ժամերուն տեղի ունեցաւ «ԷՄ.ԷՄ.ԷՅ.»-ի երու. ԷՆ.ԷՖ. 30-ի երեկոն:

8 Յայ մարտիկներ ունէին մրցումներ, որոնց կարգին օրուան կարեւորագոյն մրցումը՝ փետուրի կշիռի տիտղոսի մրցումը՝ Տարօն Գրիգորեանի եւ ամերիկացի Ալպերթ Մորալէսի միջեւ:

34 տարեկան Մորալէս պահեց իր տիտղոսը՝ խեղդելու կարելիութեամբ անշարժացնելով Գրիգորեանը:

Նոյն կշիռի գծով մրցումի մը ընթացքին Սիիրան Յարութիւնեան (Մայեսթրո) հանգիստ յաղթանակ մը արձանագրեց ամերիկացի Շէյն Թոնեսի դէմ:

Թեթեւ կշիռի մրցումներուն, Դաւիթ Մկոյեան պարտութեան մատնեց Խաւիէ Կարսիան, մինչ Կամօ Գրիգորեան իր կարգին պարտութեան մատնեց Զրիս Մարթինսը: Թեթեւ կշիռի գծով այլ մրցումի մը, Ժորա Սահակեան պարտութեան մատնեց Ռայըն Լիլին:

63,5 քկ կշիռի (ճանճի կշիռ) գծով մրցում մը, Պարգեւ Խաչատրեան պարտութեան մատնեց Տէյվիտ Տիւրնը: Արթուր Յարութիւնեան պարտութեան մատնեց Ճեֆ Մարթինը, մինչ Արշակ Տատուրեան հանգիստ յաղթանակ արձանագրեց Սեթ Զոլմենի դէմ մրցումին:

ՖՈՒԹԱԼ

ԵՈՒՐՈՅԻ ԳԾՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄՐՅԱՇԱՐՔԸ ՎԵՐՋ ԳՏԱԻ



Շաբաթ օր Յայաստանի ֆութսալի ազգային խումբը իր պատմական եւրոպի մրցաշարքը աւարտեց քառորդ աւարտականին՝ 3-0 արդիւնքով պարտուելէ ետք Խրուաթիայէն:

Եւրոպայի մէջ 5-րդ լաւագոյն դիրքը գրաւող Խրուաթիա բաւական դժուար մրցակից դարձաւ Յայաստանի համար, անկիա շատ արագ սկսաւ մրցումը՝ 2-րդ վայրկեանէն կոլ նշանակելով: Յայաստան ճնշեց եւ կոլի առիթներ ստեղծեց, բայց խրուաթ բերդապահ Անթէ Փիփիցա մնաց անդրդուելի:

Աւելի ուշ Խրուաթիա 2 այլ կոլեր եւս նշանակեց եւ ապահովեց կիսաւարտականի իր տոմսը: Ֆրանսա պէտք ունեցաւ երկարաձգման՝ դուրս ձգելու Ուքրանիան 4-2 արդիւնքով:

Այս պարտութիւնը եղաւ Յայաստանի առաջինը 9 մրցումներ անյաղթ մնալէ ետք, աւելի մանրամասնելով՝ 2023-ի նոյեմբերէն ի վեր երբ 7-1 արդիւնքով պարտութիւն կրած էր Փորթուգալէն:

Պէտք է ըսել, որ Յայաստան հիւսնալի ելոյթ ունեցած էր Եւրոպայի ախոյեանութեան (Եւրօ 2026-ին)՝ երկու յաղթանակներ արձանագրելէ ետք Ուքրանիոյ (2-1) եւ Զեխիոյ դէմ (5-4) եւ հաւասարութիւն մը՝ հիւրընկալ Լիթուանիոյ հետ (3-3):

Իր առաջին պաշտօնական մըրցաշարքի այս փայլուն արդիւնքները պատմական էին ազգային խումբին համար, որ որեւէ փորձառութիւն չուներ միջազգային կարեւոր մրցաշարքերու, եւ հասաւ Եւրոպայի լաւագոյն 8 խումբերուն:

Կը շնորհաւորենք ազգային խումբը իր պատմական նուաճումին համար եւ յաջողութիւն կը մաղթենք աշխարհի ախոյեանութեան (2028-ի) Մոնտիալի գտումի մրցումներուն:

Շաբաթ օր Յայաստանի ֆութսալի ազգային խումբը իր պատմական եւրոպի մրցաշարքը աւարտեց քառորդ աւարտականին՝ 3-0 արդիւնքով պարտուելէ ետք Խրուաթիայէն:

Եւրոպայի մէջ 5-րդ լաւագոյն դիրքը գրաւող Խրուաթիա բաւական դժուար մրցակից դարձաւ Յայաստանի համար, անկիա շատ արագ սկսաւ մրցումը՝ 2-րդ վայրկեանէն կոլ նշանակելով: Յայաստան ճնշեց եւ կոլի առիթներ ստեղծեց, բայց խրուաթ բերդապահ Անթէ Փիփիցա մնաց անդրդուելի:

Աւելի ուշ Խրուաթիա 2 այլ կոլեր եւս նշանակեց եւ ապահովեց կիսաւարտականի իր տոմսը: Ֆրանսա պէտք ունեցաւ երկարաձգման՝ դուրս ձգելու Ուքրանիան 4-2 արդիւնքով:

Այս պարտութիւնը եղաւ Յայաստանի առաջինը 9 մրցումներ անյաղթ մնալէ ետք, աւելի մանրամասնելով՝ 2023-ի նոյեմբերէն ի վեր երբ 7-1 արդիւնքով պարտութիւն կրած էր Փորթուգալէն:

Պէտք է ըսել, որ Յայաստան հիւսնալի ելոյթ ունեցած էր Եւրոպայի ախոյեանութեան (Եւրօ 2026-ին)՝ երկու յաղթանակներ արձանագրելէ ետք Ուքրանիոյ (2-1) եւ Զեխիոյ դէմ (5-4) եւ հաւասարութիւն մը՝ հիւրընկալ Լիթուանիոյ հետ (3-3):

Իր առաջին պաշտօնական մըրցաշարքի այս փայլուն արդիւնքները պատմական էին ազգային խումբին համար, որ որեւէ փորձառութիւն չուներ միջազգային կարեւոր մրցաշարքերու, եւ հասաւ Եւրոպայի լաւագոյն 8 խումբերուն:

Կը շնորհաւորենք ազգային խումբը իր պատմական նուաճումին համար եւ յաջողութիւն կը մաղթենք աշխարհի ախոյեանութեան (2028-ի) Մոնտիալի գտումի մրցումներուն:

ԹԵՆԻՍ

ՔԱՐԼՈՍ ԱԼՔԱՐԱՍ ՇԱՀԵՑԱԻ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԹԵՆԻՍԻ ՄՐՅԱՇԱՐՔԸ

22 տարեկան աշխարհի թիւ 1 թենիսմեն Քարլոս Ալքարաս երէկ շահեցաւ Աւստրալիոյ թենիսի բաց մրցաշարքը՝ 3-1արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Նախկին թիւ 1 թենիսմեն սերպ Նովակ Ճոքովիչը:

38 տարեկան Ճոքովիչ, որ պատմութեան ամենէն շատ կրան շլէմի մրցաշարքեր շահող թենիսմենն է, լաւ ձեւով սկսաւ աւարտականը եւ 34 վայրկեաններու ընթացքին շահեցաւ առաջին սեթը (6-2): Սակայն Ալքարաս յաջորդ 2,5 ժամերուն կրցաւ կարեւոր կէտեր շահիլ՝



պարտութեան մատնելով իրմէ 16 տարեկան երեք ճոքովիչը՝ 2-6, 6-2, 6-7 եւ 7-5 արդիւնքով:

Ալքարաս 22 տարեկանին եղաւ ամենէն կրտսեր մարզիկը, որ կը շահի 4 կրան շլէմի մրցաշարքերը:

ՄԵՐՅ «ՈՒՔՐԱՆԻՈՅ՝ 1 ՅՈՒՆՈՒՄ 2027-ԻՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԽՕՍՔ ԻՍԿ ԶԻ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԼ»

Ուքրանիոյ՝ 1 յունւար 2027-ին Եւրոպական Միութեան միանալու մասին խօսք իսկ չի կրնար ըլլալ: Այս մասին յայտարարած է Գերմանիոյ վարչապետ Ֆրիտրիխ Մերց:

«Եւրոպական Միութեան անդամակցութեան բոլոր թեկնածուները, ներառեալ Ուքրանիան, որոնք կ'ուզեն ապագային միանալ, պետք է համապատասխանեն չափանիշերուն: Զոլովոյթը սովորաբար կը տենէ քանի մը տարի: Եւրոպական Միութեան միանալը երկարատեւ հոլովոյթ է: Աստիճանական համարկումը միշտ կարելի է, սակայն նման արագ անդամակցութիւնը գործնականին մէջ պարզապէս անկարելի է», ընդգծած է Գերմանիոյ վարչապետը:

«Այժմ կան այլ առաջարկներ՝ Ապու Տապիի մէջ ընթացող բանակցութիւնները», նշած է Մերց:

Գերմանիոյ վարչապետը Պոլսոյ մէջ իր արտասանած խօսքին մէջ յայտարարած է. «Օրէնքներու վրայ հիմնուած աշխարհակարգը ողջ է»:

Ան, բայց եւ այնպէս, ընդունած է, որ Ուաշինկթընի եւ Եւրոպական Միութեան յարաբերութիւններուն մէջ լուրջ խնդիրներ ծագած են:

«Հակառակ ատոր, մենք պետք է շարունակենք Միացեալ Նահանգներու համագործակցութեան ձեռք երկարել: Ժողովրդավարական պետութիւններ հանդիսանալով՝ պետք է հասկնանք, որ մենք գործընկերներ ենք, եւ ոչ թէ վերադասներ ու ենթականեր», նշած է Մերց:



ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԴԵՄՊԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ ՏԻՐՈՂ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Գերմանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վիքթոր Ենգիբարեան եւ Ազրպէյճանի դեսպան Նասիմ Ադալեւ 27 յունուարին Պոլսոյ մէջ իրարեւելի արտաքին յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Արմին Լաշեթի հրաւերով մասնակցած են «Հարաւային Կովկասի մէջ շրջադարձային ժամանակները. Պատմական խաղաղութիւն Ազրպէյճանի եւ Հայաստանի միջեւ, Գերմանիոյ դերը եւ Եւրոպայի նոր արեւելեան կապը» խորագիրով քննարկումին: Այս մասին կը հաղորդէ Գերմանիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը:

Հայաստանի Հանրապետութեան դեսպան Ենգիբարեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնած է Գերմանիոյ կառավարութեան եւ անձամբ արտաքին գործոց նախարար Եոհան Վալտերփոլին, որ նախապէս եղած է Պոլսոյ մէջ Գերմանիա-Հարաւային Կովկաս բարեկամական խումբի նախագահ, նախորդող ժամանակահատուածին ցուցաբերած կառուցողական աշխատանքին եւ աջակցութեան համար:

Քննարկումին ներկայ գտնուած են տասնեակ մը փորձագետներ, պատգամաւորներ եւ լրատուամիջոցներ:

Քննարկումը կազմակերպուած է Միւնխիի «Մաքսիմիլիան» համալսարանին եւ Անիտի համալսարանի Միջազգային համագործակցութեան, ճարտարագիտական դիւանագիտութեան եւ հաղորդակցութեան հիմնարկին կողմէ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Շարունակուած 2-րդ էջէն

●ԱՐԲԻՐՆԵՐ «Ասաս»-ին. «Հըզպալլան տակաւին ունի հարկիւրաւոր թիրախահար թեւաւոր հրթիռներ, որոնք տեղակայուած են արեւելեան եւ արեւմտեան լեռնաշղթաներուն վրայ, ինչպէս նաեւ հիւսիսային Պէճայի կարգ մը շրջաններուն մէջ»:

●ԱՐԲԻՐՆԵՐ «Ասաս»-ին. «Հըզպալլան այլեւս իրանէն միայն հրթիռներու շարժիչներ կը բերէ եւ իւր թիւնըրու մնացեալ բաժինները Լիբանանի մէջ կ'արտադրուի՝ զանոնք ցամաքային ճամբով փոխադրելու դժուարութեան եւ զանոնք ապահովական գետնի վրայ խոցելի դարձնող չափին պատճառով»:

●ՏԻՒՐՆԵՐ օրաթերթի սեփական աղբիւրներ. «Միւնխի համայնքին մէջ ընտրական աշխատանքները տակաւին պատանդն են Մուսթաքբալ հոսանքի ղեկավար Սաատ Հարիրիի խորհրդարանական ընտրութիւններուն նկատմամբ անորոշ դիրքորոշման»:

●ՊԱՆԵՍԻՆԵԱՆ աղբիւրներ «Տիար» օրաթերթին կը յայտնեն, թէ լիբանանեան բանակին ստանձնելիք երկու անցարգելները «Պըտտաուի գաղթականին աշխարհագրական ծիրէն դուրս են: Պաղեստինեան խմբաւորումներուն եւ լիբանանեան բանակի հրամանատարութեան միջեւ ամբողջական համաձայնութիւն գոյութիւն ունի, որ բանակը յառաջիկայ քանի մը օրուան ընթացքին այդ անցարգելներու վերահսկողութիւնը ստանձնէ»:

●ԱՐԲԻՐՆԵՐ «Նիտա Ուաթան» օրաթերթին. «Սայտայի հասարակութեան մէջ սկսաւ դժգոհութիւն յայտնաբերելու քաղաքապետական խորհուրդի կարգ մը անդամներու անգործութեան նկատմամբ, մինչ ուրիշներ նկատառելի աշխատանք կը տանին՝ աշխատելով քաղաքի փողոցներու բարեգործման եւ լուսաւորման բարելաւման վրայ»:

ՄԻՊԻԿԱՆ «ՈՒՔՐԱՆԻԱՆ ԵՒ ՌՈՒՍԻԱՆ ԱՆՋԱՏԱՔԱՐ ՈՒԱՇԻՆԿՈՒՆԻ ՀԵՏ ՊԵՏԻ ՍՏՈՐԱԳՐԵՆ 20 ԿԵՏԷ ԲԱՂԿԱՅԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ ԶԱՅՆ ՊԵՏԻ ՀՍՏՈՐԱԳՐԵՆ»

Ուքրանիան եւ Ռուսիան անջատաբար Միացեալ Նահանգներու հետ պիտի ստորագրեն 20 կետերէ բաղկարած խաղաղութեան ծրագիրը. Եւրոպական Միութեան երկիրները զայն պիտի չստորագրեն: Այս մասին «Եւրոպական փրատա»-ի հետ հարցազրոյցի ընթացքին ըսած է Ուքրանիոյ արտաքին գործոց նախարար Անտոն Սիւպիլա:

Ան չէ բացառած, որ պայմանները կրնան փոխուիլ, սակայն այս պահուսկը քննարկուի ինքնին այս կառուցաւճիւրը:

«Եթէ խօսքը բացառապէս այս 20 կետոց շրջանակի մասին է, ապա ատիկա ներկայիս երկկողմանի փաստաթուղթ է, որ Միացեալ Նահանգներն ու Ուքրանիան պիտի ստորագրեն: Եւ Միացեալ Նահանգները զայն պետք է ստորագրեն Ռուսիոյ հետ: Ասիկա այն շրջանակն է, որ ներկայիս կը քննարկուի, սակայն բանակցութիւնները տակաւին կը շարունակուին, ատիկա հոլովոյթ է», ըսած է Սիւպիլա:

Լրագրողները նշած են, որ խաղաղութեան ծրագրի կետերէն մէկը կը վերաբերի Ուքրանիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան: Սպիկա պատասխանած է՝ նշելով, որ Նոյիսկ թէ Եւրոպական Միութիւնը փաստաթուղթը չստորագրէ, անկեղծ չի կրնար պարունակել որեւէ կետ, որուն շուրջ Եւրոպացի դաշնակիցները



րոն հետ համաձայնութիւն չէ գոյացած:

Մեկնաբանելով «խաղաղութեան փաստաթուղթը»-ու հաստատման եւրոպացի ներկայացուցիչներու մասնակցութիւնը՝ նախարարը նշած է, որ Եւրոպան խաղաղութեան հոլովոյթին մէջ եւ անվտանգութեան երաշխիքներու վերաբերեալ համաձայնագիրներուն մէջ ներկայ է:

«Ի դէպ, կարելի է, որ առաջին անգամ կը խօսիմք յատուկ «անվտանգութեան երաշխիքներ»-ու, եւ ոչ թէ՝ «երաշխիքներ»-ու կամ նմանատիպ բանի մասին», աւելցուցած է ան:

Արտաքին գործոց նախարարը շեշտած է, որ Ուքրանիոյ տրամադրուող անվտանգութեան երաշխիքները պետք է ըլլան իրաւաբանօրէն պարտադիր:

ՇԱՐՀ-ԹՐԱՄՓ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ

Սուրիոյ նախագահական պալատը յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներուն նախագահ Տանըլտ Թրամփի հեռաձայնած է Սուրիոյ նախագահ Ահմետ Շարիի եւ անոր հետ քննարկած է Սուրիոյ մէջ փոխանցման փուլի գարգացումները, անվտանգութեան ու կայունութեան ամրապնդման կարելիութիւններն ու երկկողմանի գործակցութեան հորիզոնները, ի շահ շրջանային ու միջազգային կայունութեան:

Շարի իր կարգին շեշտած է. «Նոր Սուրիան արտաքին աշխարհին բացուելու գործելանք կ'որոշուի, եւ գործակցութեան իր ձեռքը կ'երկարէ միջազգային բոլոր կողմերուն՝ հիմնուելով հասարակաց շահերուն ու փոխադարձ յարգանքին վրայ»:

Ան նաեւ բարձր գնահատած է զինուորական ուժերը, ներառեալ Սուրիոյ ժողովրդավարական ուժերը պետական պաշտօնական հաստատութիւններուն մէջ ներառելու փոխանակացողութիւնները:

Շարի իր կարգին շեշտած է. «Նոր Սուրիան արտաքին աշխարհին բացուելու գործելանք կ'որոշուի, եւ գործակցութեան իր ձեռքը կ'երկարէ միջազգային բոլոր կողմերուն՝ հիմնուելով հասարակաց շահերուն ու փոխադարձ յարգանքին վրայ»:

Սուրիոյ նախագահը նաեւ նշած է, որ իր երկիրը ամբողջովին կը կառչի սուրիական հողերու ամբողջականութեան եւ ազգային գերիշխանութեան, ինչպէս նաեւ շեշտած է իր հաստատութիւնները պահպանելու եւ քաղաքացիական խաղաղութիւնը ամրապնդելու պետութեան նախանձախնդրութիւնը:



ՆԱԵՐ ԹՐԱՄՓ-ԷՐՏՈՂԱՆ ԴՅՈՒԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ

Թուրքիոյ նախագահի գրասենեակը հաղորդեց, որ Թրամփի հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի հետ եւ քննարկած Սուրիոյ մէջ տիրող կացութիւնը, Կազայի կացութիւնը եւ հաղաղութեան խորհուրդի աշխատանքը:

«Մեր նախագահը հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի հետ: Ղեկավարները քննարկած են Թուրքիոյ եւ Միացեալ Նահանգներու միջեւ երկկողմանի յարաբերութիւնները, Սուրիոյ մէջ տիրող կացութիւնը եւ Կազայի խաղաղութեան խորհուրդի աշխատանքը:

«Մեր նախագահը նշած է, որ Թուրքիան մեծ նշանակութիւն կու տայ զինադադարի համաձայնագրի լիարժեք իրականացման եւ Սուրիոյ զինեալ ուժերու համարկման, եւ ուշադիր կը հետեւի այս հոլովոյթին՝ Միացեալ Նահանգներու եւ Սուրիոյ իշխանութիւններուն հետ համակարգուած: Էրտողան յոյս յայտնած է Կազայի հաղաղութեան խորհուրդի արդիւնաւետ աշխատանքին վերաբերեալ եւ վստահութիւն յայտնած, որ Կազայի մէջ մարդասիրական աղետի աւարտն ու քաղաքի վերականգնումը պիտի հարթեն մեր շրջանին մէջ երկարատեւ խաղաղութեան ճամբան», նշուած է Էրտողանի գրասենեակի յայտարարութեան մէջ:

ՔԱՐԼՈՍ ԱԼՔԱՐԱՍ ՇԱՀԷՑԱՒ . . .

Շարունակուած 7-րդ էջէն

2022-ին ան շահած էր «Եու. Էս. Օփըն»-ը, ապա ան 2025-ին կրկնած զայն: 2023-ին եւ 2024-ին՝ Ուիմպլը-տընը, 2024-ին եւ 2025-ին Ռոլան Կարոսը եւ այս տարի Աւստրալիոյ բաց մրցաշարը:

Օր մը առաջ, թիւ 1 թենիսփումբն Արիւս Սապալիւքա 6-4, 4-6 եւ 6-4 արդիւնքով անակնկալ պարտութիւն կրած էր Ղազախստանը ներկայացը-

նող Էլենա Ռիպաքինոյէն:

2018-էն սկսեալ Ղազախստանը ներկայացնող Ռիպաքինա 2022-ին կրցած էր Ուիմպլըտընը շահիլ:

Սապալիւքա 2023-ին եւ 2024-ին շահել է եւս Աւստրալիոյ թենիսի բաց մրցաշարը երկրորդ յաջողական տարին ըլլալով չկրցաւ շահիլ այս մրցաշարը:

ԹՐԱՄՓ. «ՆՈՒՐԻ ՄԱԼԻՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԻՐԱՔԻՆ ՕԺԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ ՊԵՏԻ ՀՏՐԱՄԱՂԻԷ»

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ յայտարարեց, որ եթէ Նուրի Մալիքին Իրաքի վարչապետ ընտրուի, Միացեալ Նահանգները Իրաքին օգնութիւն պիտի չտրամադրեն:

Միացեալ Նահանգներու նախագահը «Թրուք Սոշլ» ընկերային ցանցին վրայ գրեց. «Անոր քաղաքակա-

նութեան եւ խնքի զաղափարախօսութեան պատճառով, եթէ ան ընտրուի, Միացեալ Նահանգները ապագային Իրաքին որեւէ օգնութիւն պիտի չտրամադրեն»:

«Վերջին անգամ, երբ Մալիքին իշխանութեան վրայ էր, երկիրը դէպի աղքատացում եւ համատարած քաոս անկում կրեց: Պետք չէ ատոր կրկնութիւնը արտօնել», աւելցուց ան:

«Եթէ Ուաշինկթընը Իրաքին օգնելէ դադրի, անկեղծ յաջողուել, բարգաւաճելու եւ ազատութեան որեւէ առիթ պիտի չունենայ», եզրափակեց Սպիտակ տան ղեկավարը:

Նշենք, որ Համակարգումի շրջագիծը Նուրի Մալիքին առաջարկած է Իրաքի վարչապետի պաշտօնին:

Իրաքի նախկին վարչապետ Մալիքի մերժեց Իրաքի ներքին գործերուն ամերիկեան միջամտութիւնը՝ զայն նկատելով Իրաքի գերիշխանութեան ոտնահարում:

Ան շեշտեց, որ պետութիւններուն միջեւ երկխօսութիւնը քաղաքական միակ ընտրանքն է՝ աւելցնելով, որ կը մերժէ ցուցմունքներու եւ պաշտակալներու ոճը:

Մալիքի ընդգծեց, որ մինչեւ վերջ պիտի աշխատի իրագործելու համար Իրաքի ժողովուրդին գերագոյն շահերը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԿԱՍԾ ԵՆ ՎԵՆԵԶՈՒԵԼԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԱՊԱՍԱՌԵՑՆԵԼ

Վենեզուելայի նախագահի պաշտօնակատար Տեյսի Ռոտրիկէզ յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներ սկսած են ապաստանեցնել պատժամիջոցներուն պատճառով սառնեցուած վենեզուելական գումարները:

Ռոտրիկէզ, որ նախագահի պաշտօնակատարի պաշտօնը ստանձնեց նախագահ Նիքոլաս Մատուրոյի ամերիկեան ուժերու կողմէ ձերբակալումէն ետք, պատկերասփիւռէն յայտնեց. «Մենք սկսած ենք վերացնել սառնեցումը Վենեզուելայի հաշիւներուն, որոնք վենեզուելացի ժողովուրդի սեփականութիւնն են»:

«Պիտի կարենանք այդ մեծ հաշիւները ներդրել հիւանդանոցներու սարքաւորման համար: Անոնք սարքաւորումներ են, զորս կը գնենք Միացեալ Նահանգներէն եւ այլ երկիրներէ», նշեց ան:

Ռոտրիկէզ ապաստանեցուած գումարներու չափը չնշեց:



ԱՁՈՒՆԻ ԶԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ազունիի Հայ ազգային բուժարանին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները յունուար 2026-ի ընթացքին.

- Տիկին Նազելի Մարտիրոսեան-Սլիմ (Տուպայեւ)՝ 1042\$
 - Պատասպարեալի հոգատարութիւն. յունուար եւ փետրուար ամիսներուն համար
 - Միացեալ Նահանգներէն հետեւեալ անձերը՝
 - Տիանա Չերգեզեան 50\$
 - Սոնա Սարաֆեան 50\$
 - Անի Սարաֆեան 100\$
 - Եթեր Գարախանեան 100\$
 - Աստղիկ Հարապեան 100\$
 - Ժաք Պարսումեան (Բուժարանի պատընպարեալներուն Նոր տարուան խրախմտքի համար)՝ 1.500\$
 - Ղազարոս Մեստճեան՝ Վերա Մեստճեանի մահուան յիշատակին 100\$
 - Ազգային մը 1000\$
 - Վիգէն Սահակեան (Միացեալ Նահանգներէն)՝ 1000\$
- պատասպարեալի մէկ ամսուան հոգատարութիւն
- Յովհաննէս Խօջեան 40 հատ Այնճարի հաց
 - Հայ տիկնանց միութիւն (Հոլանտայեւ) 15 քիւօ միս, 5 քիւօ ցաւար, 10 քիւօ մածուն, 15 քիւօ պանան, 11 քիւօ նարինջ
 - Թորոս Հելվաճեան 5 կապ հաց
 - Սարգիս եւ Էլմաստ Սարգիսեան 10 կապ հաց
 - Սարգիս Սկրտիչեան 5 կապ հաց
 - Սոնա Պողոսեան 5 կապ հաց
 - Այն Տարայի Աւետարանական Եկեղեցւոյ տիկնայք 130 հատ քըշքըշ մենիշ

Կանխայայտ շնորհակալութիւն:

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՈՐԵՆՈՒԹԻՒՆ՝ ԱՁՈՒՆԻ ԶԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻ